№ 67 ՈՒՐԲԱԹ ԱՊՐԻԼԻ 3

1909
ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ ԱՊՐԻԼԻ 3 № 67

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՍԱՆԱՏՈՐԻԱ ՊԵԱՏԻԳՈՐՍԿՈՒՄ
Տես 4-րդ երեսի վրա։
(առ.) (M. 125977) 272. 1—1

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆ!
Ի նկատի ունենալով, որ մինչև այժմ շատ չարաշահողներ սպառեն իրանց աւելի վատ ապրանքի պապիրոսները, և գործածելով արկղիկներ և կափարիչներ մեր բոլորին յայտնի
Заявлено отделу промышленности
ԲԱՐՁՐ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ՍԻՄՊԱՏԻԱ 10 ՀԱՏԸ 5 ԿՈՊ.
№ 8 10 ՀԱՏԸ 5 ԿՈՊ.
Ինչպէս նաև մեր ֆիրմայի ուրիշ գլանակներ, մեր պ. պ. գնողներին խնդրում ենք ուշադրութիւն դարձնել ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՄԱՐԿԱՅԻՆ և ազգանունին
Ն. Ի. ԲՕԶԱՐՋԵԱՆՑ ԵՒ ՈՐԴԻՔ
(հ. կ.) 23 10—3

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ պատիւ ունի յայտնել, որ ապրիլի 5-ին Վանքի մայր եկեղեցում կատարվելու է դպրոցիս բարերար հանգուցեալ
ՅՈՎՍԷՓ ԷՖԷՆԴԵԱՆԻ
հոգեհանգիստը։
(ու. կ.) 262. 2—1

ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԲԱՑՎՈՒՄ Է
Այսօր, ուրբաթ, ապրիլի 3-ին, առաւօտեան 11 ժամին Կայսերական Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան դահլիճում և կը շարունակվի 4-ին և 5-ին ապրիլի։
(հ. ու.) առ. 270. 3—2

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
Շաբաթ, ապրիլի 4-ին
ՏԻԿ. ՍԻՐԱՆՈՅՇ
XXXV-ամեայ գործունէութեան առիթով
կը ներկայացնէ
ՄԷԴԷԱ
Դրամա 5 գ. հեղ. Սուվօրինի և Բուրենինի։
Մասնակցում են. տ. տ. Սիրանոյշ, Արաքսեան, Ցամրիկ, պ. պ. Արաքսեան, Ազատեան, Փիրումեան, Ցոլակ և ուրիշները։
Սկիզբը ժամը 8-ին
Ռեժ. տ. Սիրանոյշ
Գները բենեֆիսային են։ Վաղօրօք տոմսակ ստանալ ցանկացողները թող բարեհաճեն դիմել Ծատուրեանի խանութ (Дворцовая ул.), կամ Թատրոնի կասսան։
Տոմսակներ ոչ որին չեն ուղարկվելու
(հ. ու. չ.) (ա.) 254. 4—3

ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ Կ. ՊՈԼՍՈՒՄ

1

Թիւրքիայի մայրաքաղաքում տեղի ունեցած դէպքերը բևեռել են իրանց վրա ընդհանուր ուշադրութիւն։

Նոր, սահմանադրական կարգերի անցած Թիւրքիան հմայք էր ազդել ամբողջ աշխարհին իր խաղաղ յեղափոխութեամբ։ Աւելի քան կէս տարի է, ինչ օսմանեան պետութեան մէջ հաստատվել է ազատական, սահմանադրական կարգ, որը մինչև այժմ չէր խախտվել նոյն իսկ այնպիսի ծանր փորձութիւններից, ինչպէս էին Բօսնիայի-Հերցեգովինայի վերջնական միացումը Աւստրիային և Բուլղարիայի անկախութեան հրատարակումը։

Երիտասարդ Թիւրքիայի գերիշխող ազդեցութիւնը կարողացել էր պահպանել կարգ իշխանութեան մէջ, հեղինակութիւն ժողովրդական խաւերում և վստահութիւն եւրոպական քաղաքագէտների շրջանում։

Սակայն Կ. Պօլսում և առհասարակ Թիւրքիայում նոր քաղաքացիական կեանքը և փոխված քաղաքական հանգամանքները, ազդելով կամաց-կամաց մարդկանց վրա, առաջ են բերել մի շարք տրամադրութիւններ, որոնք այնքան հասունացել են, որ այժմ փորձում են մաքառումների և ընդհարումների մէջ մտնել։

Հաստատված կարգերի դէմ էին, անշուշտ, նախ հին րէժիմի երկրպագուները, որոնք ոչ մի կերպով չէին կարող մարսել ոչ իրանց ազդեցութեան չքացման վտանգը և ոչ անախորժ ազատական հովերի տիրապետութիւնը։ Հին րէժիմի պաշտպանները՝ թէ աշխարհիկ և թէ հոգևոր տարբերից բաղկացած՝ փորձեր արին բողոքներ և խլրտումներ առաջ բերելու, բայց հասարակական-ժողովրդական ասպարէզում չը կարողացան տպաւորութիւն գործել և նրանք վճռեցին սպասել, մինչև որ գային աւելի նպաստաւոր օրեր։

Բայց հնապաշտների և ֆանատիկոսների կողքին սկսեցին երևալ և ուրիշ դժգոհներ, որոնք պատկանում էին աւելի ազատ, աւելի մեծ պահանջներ ունեցող մարդկանց դասին։ Հաստատված կարգը չէր գոհացնում այս վերջիններին, երբ մանաւանդ պարզվում էր, որ երիտասարդ Թիւրքերի տիրող կուսակցութիւնը տէր դառնալով երկրի իշխանութեանը՝ սկսում է ճնշումներ գործ դնել, ձգտում է սեղմել խօսքի ազատութիւնը և խէթ աչքով է նայում արմատական պահանջներ առաջադրող անձնաւորութիւններին և խմբերին։

Անտարակոյս, եթէ Կ. Պոլսում սկսված ներկայ յուզմունքները կարողանային ծառայել աւելի լայն և ռամկավարական նպատակների, նպաստէին հաստատելու աւելի բարեկարգ վիճակ երկրի մէջ և ուժեղացնէին սահմանադրութեան հիմունքները իրականութեան մէջ, միայն ողջունել կարելի կը լինէր պոլսական ներկայ շարժումները։

Բայց բոլոր երկիւղները և կասկածները այնտեղ են, թէ բողոքի և դժգոհութեան արտայայտութիւններից կարող են օգտվել բոլորովին ուրիշ տարրեր, հին րէժիմի երկրպագուները, և փորձել յետ խլել ձեռք բերված ազատութիւնները։

Եւ ահա պոլսական գործողների բոլոր խելացիութիւնը և տակտը այն բանի մէջն է կայանում, որ նրանք կարողանան պաշտպանել սահմանադրութիւնը վտանգներից և թոյլ չը տան, որ հին րէժիմի ներկայացուցիչները կարողանան ազդեցութիւն ձեռք բերել և ժողովրդականութիւն շահել։

Կ. Պօլսում միևնոյն ժամանակ դեր են կատարում եւրոպական պետութիւնների ազդեցութիւնները։

Այդ մասին հետևեալ անգամ։

Ա. Քալանթար

ՅՈՒԶՄՈՒՆՔՆԵՐԸ Կ. ՊՈԼՍՈՒՄ

—

Կ. Պօլիս, 1 ապրիլ

Ազգաբնակութիւնը գիշերն անդողով անցրեց։ Ժամը 11-ից մինչև 2-ը Ստամբուլում տեղի էր ունենում կատաղի հրացանաձգութիւն, որը յետոյ անցաւ Պէրա։ Մինչև առ. ժամը 5-ը զանազան տեղերում լսվում էին առանձին կրակոցի ձայներ։ Լուրերին նայած, կռւում էին երիտ. Թիւրքերի զօրքերը ահրարների հետ։ Վերջնական յաղթութիւնը մնաց վերջիններին։ Ճշգրիտ տեղեկութիւններ առ այժմ չը կան։ Լուրերի համաձայն, զինուորներին աջողվել է պարլամենտ մտնել, ուր ժողովված են լինում մի քանի պատգամաւորներ. զինուորները սպառնալիքներով նրանց ստիպում են համաձայնել, որ կաբինետը փոխվի և պատգամաւորութիւն ուղարկվի։ Պատգամաւորութեանը միացան զինուորներից մի քանիսը երկրորդ անգամ ամնիստիա պահանջելու ապստամբութեան համար։ Սուլթանը իբր թէ իր համաձայնութիւնը տուել է։

Հիլմի-փաշան հրաժարական տուեց։ Նախատեսվում է, որ առաջին մինիստրը վերստին կը նշանակվի Քեամիլ փաշան։ Ստանալով այս տեղեկութիւնը՝ ամբոխը ցրվեց։ Անկարգութիւնների ժամանակ սպանվեցին արդարադատութեան մինիստրը և պատգամաւոր Էմիր-Արսլանը, որին սխալմամբ ընդունել էին «Թանինի» խմբագրի տեղ։ Վիրաւորվեց ծովային մինիստրը. ձերբակալված է զինուորական մինիստրը։

Երեկոյեան ժամը 11-ին զինուորները խմբերով վերադառնում են իրանց զօրանոցները։ Ըստ երևոյթին, զինուորական մինիստրութիւնը դեռ գրաւված է երիտասարդ Թիւրքերին հաւատարիմ զօրքերով։ Գիշերս սպասվում է սալոնիկեան երեք գնդերի գալուն։ Երկիւղ կայ, որ զինուորական խառնակութիւնները վերսկսվեն։ Թէև այսօր յաղթեցին երիտասարդ Թիւրքերի հակառակորդները, Ստամբուլից լսվում են համազարկի և պատերազմական ազդանշանների ձայներ։ Այնտեղ դեռ առաւօտից տեղի է ունենում կռիւ։ Այսօր լրագիրները յայտնում են, թէ իբր զինուորները ուղղակի կրակում էին օդում, ուրախութիւն յայտնելով իրանց ձեռք բերած աջողութեան առիթով։

Մեծ վէզիր նշանակվեց արտաքին գործերի նախկին մինիստր Թէվֆիկ փաշան, իսկ զինուորական՝ Էդհէմ փաշան։ Այսօր հեռագրատունը քաղաքական հեռագիրների ընդունելութիւնը վերսկսեց։ (Հ. Գ.)

—

Կ. Պօլիս, 1 ապրիլ

Ծովային մինիստրի վիրաւորվելու տեղեկութիւնը հաստատվում է։ Լրագիրները նոյն իսկ հաւատացնում են, որ նա սպանված է։ Զինուորական մինիստրը նոյնպէս վիրաւորվել է Բ. Դռնից Եըլդըզ գնալու ժամանակ։

Ցերեկվայ ժամը 4-ից յետոյ յուզմունքը սկսեց մեղմանալ։ Երեկոյեան ժամը 11-ին նոր զինուորական մինիստր Էդհէմ փաշան եկաւ Այա Սօֆիայի հրապարակը, առաջարկեց զինուորներին ցրվել, հաղորդեց տեղի ունեցած փոփոխութիւնների մասին։

Ահրարների լրագիրների հաւաստիացումներին հակառակ, ականատեսները հաստատում են, որ հրացանաձգութիւն եղաւ Այա-Սօֆիայի միտինգի զինուորների և զինուորական մինիստրութիւնը պաշտպանող զօրքերի միջև։ Պետ. Հեռ. Գործ. Թղթակցի առանձնապէս իրազեկ լինելը հաստատում է, որ կռիւը սկսվեց ժամը 11-ից և շարունակվեց մինչև գիշերվայ ժամը 12 և կէսը. կրակում էին անընդհատ համազարկերով, պաչկաներով, կամուրջից մինչև Ստամբուլի կէսը ընկած տարածութեան վրա։ Ցարձակման և յետ մղման ազդանշանները փոփոխվում էին անընդհատ, յետոյ զօրանոցները վերադարձող զօրքերը կրակում էին ընդմիջումներով մինչև առաւօտվայ ժամը չորսը։ Սպանվածների և վիրաւորվածների թիւը յայտնի չէ։ Ահրարական լրագիրները հաշւում են տասներկու սպանված, որոնց թւումն են մինիստրները և օֆիցերները։ «Օսմանեան Լլօյդը» յիշատակում է մօտ հարիւր սպանված և վիրաւորված։ Ականատեսները հաղորդում են, որ պարլամենտի պատուհանները փշրվել են։

Այսօր դրամատները փակ են։ Ստամբուլում հրացանաձգութիւնը վերսկսվեց։ Կրակոցի ձայներ են լըսվում Պէրայի վերին մասերում։ (Հ. Գ.)

—

Կ. Պօլիս, 1 ապրիլ

Այսօր «Թանին», «Շուրայի-Իւմմէթ» և «Սաբահ» լրագիրները, նաև «Թիւրքին» լոյս չը տեսան։ Ահմէդ-Րիզան, Հիւսէյին-Ջահիդը և ուրիշ շատ երիտասարդ-Թիւրքեր անյայտացել են։ Զինուորները պահանջում են մեծ վէզիր նշանակել Քեամիլ-փաշային, զինուորական մինիստր՝ Նազիմ-փաշային։ Դեռ կառավարութիւն չը կայ, զօրքերի շարքերում օֆիցերներ նոյնպէս չը կան։ Զինուորները փողոցներում, լցնելով հրացանները, կրակում են առանց նախազգուշութեան։ Ստացվում է պաշարված քաղաքի տպաւորութիւն։ Ռուսաց դեսպանատան դիմաց՝ Պետ. Հեռ. Գործակալութեան Թղթակիցը ընկաւ փողոցի մօտ կրակող զինուորների կրակի տակ։

Առաւօտեան Այա Սօֆիայի հրապարակի վրա կրկին տեղի ունեցաւ զինուորական միտինգ։ Էդհէմ-փաշային աջողվեց յորդորել զինուորներին ցրվել։ Նրանք ցրվեցին՝ ի պատիւ սուլթանի և շարիաթի բացագանչութիւններով, կրակելով օդում, որից մի քանի մարդ վնասվեցին։ Զինուորները, կրպակներում մթերքներ գնելով վճարում են և տէրերին հաւատացնում, որ իրանք շատ փող ունեն։

Երեկոյեան ժամը 6-ի մօտերը Բ. Դրան մէջ կարդացվեց նոր կաբինէտի կազմի մասին հրատարակված հրովարտակը։ Մեծ վէզիր նշանակված է Թէվֆիկ փաշան, զինուորական մինիստր՝ Էդհէմ-փաշան, արդարադատութեան՝ Հասան-Ֆէհմի, ֆինանսների՝ Նուրի-բէյ, ծովային՝ Միր-Րիզա, լուսաւորութեան՝ Աբդուրրահման, վակուֆների՝ Համիդ-Բիգա, շէյխ-ուլ-իսլամը և արտաքին գործերի, առևտրի ու արդիւնաբերութեան մինիստրները մնում են հները։ Ներքին գործերի մինիստրի պաշտօնը ժամանակաւորապէս կատարում է մինիստրի օգնականը։ (Հ. Գ.)

—

Կ. Պօլիս, 1 ապրիլ

Զինուորական դէպքերի մասին պաշտօնական հաղորդագրութիւն դեռ ևս չը կայ։ Ականատեսների պատմելով և Հեռ. Գործ. գործակալի առած տեղեկութիւնների համաձայն, որոնք քաղված են դիւանագիտական աղբիւրներից, գործը հետևեալն է։ Երիտասարդ-Թիւրքերի գործողութիւնների շնորհիւ՝ զանազան շրջաններում, մանաւանդ «Սերբէստիի» խմբագրի սպանութիւնից յետոյ, գայրոյթ առաջացաւ դէպի նրանց կուսակցութիւնը։ Միևնոյն ժամանակ՝ հոգևորականութեան մի մասը, որ հսկում է շարիաթի ճշգրիտ գործադրութեան վրա, կազմակերպել է, հէնց այս նպատակով, «մահմեդական ընկերակցութիւն»։ Երիտասարդ-Թիւրքերի գլխաւոր հակառակորդ ահրարները և «մահմեդական ընկերակցութիւնը» միանալով պատրաստեցին ներկայ յեղաշրջումը։ Երիտասարդ-Թիւրքերի կուսակցութիւնն իր յոյսը դրել էր սալոնիկեան որսորդ գնդի վրա, բայց հէնց այդ գունդն առաջինը եղաւ, որ հակառակորդների գլուխն անցաւ։ Մարտի 31-ի կէս-գիշերային շարժման միջոցին, որսորդական երկու բատալիօն, առանց օֆիցերների, Պերայից Ստամբուլ անցաւ և գրաւեց Այա-Սօֆիայի հրապարակը, ուր գտնվում է պարլամենտի շէնքը։ Որսորդական այդ երկու բատալիօններին միացան և հետևակ գվարդիական եօթ բատալիօն և ծովային զինուորների մի մասը։ Առաւօտեան ժամը 3-ին սպառազինված 5000 զինուորներ, առանց օֆիցերների, միտինգ գումարեցին։ Վերջիններիս մի մասը ձերբակալվեց, իսկ միւս մասը ապաստան գտաւ Սերասկէրիատում։ Առաւօտեան եկան մնացած մասերը և զինուորական ուսումնարանի ինկերները։ Ապստամբութեանը չը յարեցին որսորդական մի բատալիօն, որը պահպանում էր Եըլդըզը, նոյնպէս և որսորդական մի ուրիշ բատալիօն, որը ձերբակալված էր Սերասկէրիատում, թնդանօթաձիգների մի մասը և հեծելազօրի մի քանի էսկադրօն, որոնք պահպանում էին Սերասկէրիատը։ Այա-Սօֆիայի հրապարակում առաւօտեան և օրվայ ընթացքում ապստամբներին միացան 600 սօֆթա, խօջա և իւլէմա։ Առաւօտեան ժամը 7-ին Եըլդըզ ուղարկվեց առաջին պատգամաւորութիւնը, իսկ ժամը 9-ին մինիստրները հաւաքվեցին Բ. Դրան մէջ և սկսեցին բանակցել զօրքի հետ։ Դրանից յետոյ Սերասկէրիատի կողմից ձեռք առնվեցին միջոցներ, որոնք կայանում էին հեծելազօրի յարձակման մէջ։ Երկու կողմից սպանված են մի քանի հոգի։ Յարձակումը անօգուտ անցաւ։ Սերասկէրիատի կողմից ուղարկված գնդակացիրները ճանապարհին գրաւվեցին խռովարարների կողմից։ Բանակցութիւնները մինիստրութեան և զինուորների միջև վարում էր շէյխ-իւլ-իսլամը։ Հետևանքը այն եղաւ, որ կաբինետը իր հրաժարականն ուղարկեց սուլթանին։ Ստամբուլում այդ ժամանակ փողոցները դատարկ, հանգիստ և խանութները փակ էին, իսկ Այա-Սօֆիայի հրապարակը շրջապատված էր զօրքերով և ոչ ոքի չէին թողնում անցնելու։

Բ. Դրանը մինիստրները ոչ ոքի չէին ընդունում։ Սերասկէրիատի հրապարակը դատարկ էր, որտեղից մերթ ընդ մերթ լսվում էր հրացանաձգութիւն և ուր գտնվում էին երիտասարդ-Թիւրքերին հաւատարիմ օֆիցերները և զինուորներ։ Կամուրջի վրա ընկած էին մի օֆիցերի և մի քանի զինուորների դիակներ։ Ղալաթիայի ուղղութեամբ կանգնեցված էին երկու գնդակացիրներ։ Կէսօրից յետոյ պարլամենտում հաւաքվեցին պատգամաւորները, որոնց՝ զինւորները բաց էին թողնում միմիայն այն ժամանակ, երբ հաստատ խոստում էին առնում շէրիաթի պաշտպանութեան համար։ Հաւաքվեցին մօտ 60 պատգամաւորներ, որոնք հրաւիրված էին Ուսկիւբի պատգամաւոր Սաիդի հեռագրով, որպէսզի զինւորների պահանջին պատասխան տրվի։ Երիտասարդ-Թիւրքերը բացակայում էին։ Սկզբում բանակցութիւնը զինւորների հետ կայանում էր պատուհանից։ Ապա զինւորները գրաւեցին պարլամենտի շէնութիւնը։ Նիստ կայացաւ և ընդունվեցին միտինգի բոլոր պահանջները։ Վճռվեց ուղարկել ներկայացուցչութիւն սուլթանի մօտ և խնդրել, որ Քեամիլ-փաշան նշանակվի մեծ վէզիր և ամնիստիա շնորհվի յեղաշրջման մասնակցողներին։ Ահմէդ Րիզա-բէյը, որ գտնվում էր Բ. Դրանը, ուղարկեց իր հրաժարականը։ Ցերեկվայ ժամը 4-ին սուլթանի քարտուղարը պարլամենտ ժամանեց և կարդաց զինւորներին սուլթանի հրովարտակը կաբինէտի փոփոխութեան, ամնիստիայի և շարիաթի ճշգրիտ պահպանութեան մասին։ (Հ. Գ.)

—

Վիէննա, 1 ապրիլ

«Կոր. Բիւրօյին» հեռագրում են Կ. Պոլսից. «Պարլամենտի նախագահը, մեծ վեզիրը և կաբինետը ամբողջ կազմով հրաժարական տուին։ Հրաժարականն ընդունվեց։ Ասում են, որ Քեամիլ կամ Սաիդ փաշան նշանակվեցին մեծ վէզիր, իսկ Նազիմ-փաշան զինւորական մինիստր։ Զինւորները սպանեցին մի պատգամաւորի»։ (Հ. Գ.)

—

Վիէննա, 1 ապրիլ

«Կոր. Բիւրօյին» հեռագրում են Կ. Պոլսից. «Ալբանացիների լիդեր Իսմայիլ-Քեմէլը ընտրվեց պատգամաւորների պալատի նախագահ։

«Շէյխ-ուլ-իսլամը կը մնայ իր պաշտօնում։

«Կ. Պոլսում անհետ կորան շատ երիտասարդ-Թիւրքեր։ Երիտասարդ-Թիւրքերի կոմիտէի իշխանութիւնը բոլորովին ընկել է։ Հին Թիւրքական պահպանողական և հոգևոր տարրերը ըստ երևոյթին վերջնական յաղթութիւնը տարան։ Այսօր քաղաքում անհանգստութիւն է տիրում»։ (Հ. Գ.)

—

Վիէննա, 1 ապրիլ

«Կոր. Բիւրօյին» հեռագրում են Կ. Պոլսից. «Զօրաբանակի հրամանատար նշանակվեց Նավէր փաշան։ Ապստամբները չեն ցանկանում ճանաչել Թէվֆիկ փաշային։ Ապստամբների պահակները շրջում են քաղաքի փողոցներով։ Քաղաքում կէս գիշերվայ մօտերը հանգստութիւն տիրեց. զինւորների խմբերը, որոնք վերադառնում են զօրանոցները առանց օֆիցերների, շարունակ կրակում են օդում իրանց ուրախութիւնը արտայայտելու համար։ Կաբինէտի հրաժարականի իրազէն ուրախութիւն պատճառեց։ Հրացանաձգութիւնը տևեց մի և կէս ժամ, երբեմն այնպէս երկար, որ սարսափ ու երկիւղ էր ազդում ազգաբնակութեանը և այն ենթադրութիւնը ծնեցնում, թէ ապստամբները և միացած զօրքերը ճակատամարտում են»։ (Հ. Գ.)

—

Վիէննա, 1 մարտի

«Կոր. Բիւրօյին» հեռագրում են Կ. Պոլսից. «Անհագին թւով զօրքեր դիմում են դէպի Ստամբուլ և յետ, ոմանք առանց օֆիցերների, միւսները՝ օֆիցերներով։ Ըստ երևոյթին, զինւորները ստիպում են օֆիցերներին գործել իրանց հետ միասին»։

Ժամը 4-ին ստացված հեռագիրը հաղորդում է. «Մինիստրների խորհուրդը նիստ է գումարել վաղ առաւօտից։ Միաժամանակ խորհրդակցում է երիտասարդ Թիւրքերի կոմիտէը։ Բացի իսլամի պաշտպանութիւնից ապստամբները պահանջում են արձակել երիտասարդ Թիւրքերի կոմիտէը, հրովարտակ հրատարակել այն մասին, որ նա այլևս իրաւունք չունենայ խառնվել պետական գործերին, պաշտօնանկ անել մեծ վէզիրին, զինւորական մինիստրին և պարլամենտի նախագահին ու խոստանալ, որ ապստամբները անպատիժ կը մնան։ Ապստամբները կշտամբում են օֆիցերներին, որ նրանք խանգարեցին նրանց կատարել ղուրանի պատուիրած աղօթքները, երբ թէ նրանք կամենում են վերացնել սուլթանի համար սահմանված աղօթքը։ Ապստամբների հետ բանակցութիւններն առայժմ անհետևանք են։ Արտիլերիան կը գործադրվի միայն ծայրայեղ դէպքում։ Ապստամբները իրանց պահում են բաւական հանգիստ։ Նրանց հրամանատարը մի ունտեր-օֆիցեր է։ Նրանց շարքերը շարունակ կրկնապատկվում են եզակի զինւորներով, մանր խմբերով, նաև զինված մասնաւոր մարդկանցով։

Հեռագրաթելերը քաղաքում կտրտված են։ Առաւօտեան ապստամբները փորձեցին միանալ զինւորական մինիստրութեան մէջ գտնվող զօրքերի հետ, բայց հեծելազօրքը արգելք եղաւ։ Զոհերի թիւը դեռ մեծ չէ. հաշվում են վեց սպանվածներ։ Պարլամենտում ժողովված պատգամաւորները դիմեցին միացած պատգամաւորներին, առաջարկելով գալ պարլամենտ ապստամբների առաջադրած պահանջները քննելու համար։

Երեկոյեան ժամը 9-ին հեռագրում են. «Զանազան աղբիւրներից բղխած տեղեկութիւնների համաձայն, սպանված և վիրաւորված են 30 հոգի»։

Ժամը 10½-ին հեռագրում են. «Մարշալ Էդհէմ փաշան նշանակվեց զինւորական մինիստր։ Նա ցնծող զօրքերի ուղեկցութեամբ՝ երաժշտութեամբ՝ Ըլդըզ-Քեօշկից դիմեց Ստամբուլ։ Զօրքերն, ըստ երևոյթին միանգամայն գոհ են։

«Սուլթանի առաջին քարտուղարը պարլամենտում կարդաց մի իրադէ, թէ սուլթանը ընդունեց կաբինէտի հրաժարականը և կազմվում է նորը. երկրում կարգ ու կանոնը և հանգստութիւնը պահպանելու համար միջոցներ են ձեռք առնված. շարժմանը մասնակցած զինւորներին ներումն է շնորհված. այսուհետև շարիաթը խստութեամբ կը պահվի. զինւորները կարող են վերադառնալ ամեն մէկը իր զօրանոցը, ազգաբնակութիւնը — աշխատանքի։ Սուլթանի իրադէի վերջին ողջոյն-խօսքերը ընդունվեցին ոգևորված բացագանչութիւններով ի պատիւ նրա»։ (Հ. Գ.)

—

Վիէննա, 1 ապրիլ

«Կորր. Բիւրօյին» հեռագրում են Կ. Պոլսից. «Առաւօտեան ծով մտաւ մի զրահանաւ, լուրերին նայած՝ որպէսզի առաջարկէ Սալոնիկից եկող զօրքերին վերադառնալ կամ հարկադրէ նրանց վերադառնալ։

Երէկվայ ընթացքում սպանվածների և վիրաւորվածների թիւը 100-ից անցնում է։ Շատ օֆիցերներ ծեծվել են, վիրաւորվել և սպանվել. մի քանիսը պահվում են զինւորների հսկողութեան տակ։ (Հ. Գ)

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Օրից օր սաստկանում են երիտասարդ-Թիւրքերի կոմիտէի վրա յարձակումները. Նախկին մեծ վէզիր Քեամիլ փաշան «Իկդամ» լրագրում նորերս հրատարակել է մի մեմօրանդում, որը, ըստ արտասահմանեան լրագիրների, մեծ ազդեցութիւն է ունեցել Կ. Պոլսում. Քեամիլ փաշան յայտարարում է, որ ինքը բնաւ ցանկութիւն չէ ունեցել վերականգնել միապետականութիւնը և ինքը տապալվել է շնորհիւ երիտասարդ-Թիւրքերի կոմիտէի ինտրիգների։ Եւս առաւել նա յարձակվում է կոմիտէի վրա, նրա՝ զօրքերի մէջ կուսակցական ոգի մտցնելուն համար, որ թուլացնել միայն կարող է զինւորական ոյժը։ Քեամիլը ապացուցանում է, որ Թիւրքիան այժմ մեծ կարիք ունի հզօր զօրքի։ Եթէ նա ունենար ուժեղ զօրք 1908 թ., այն ժամանակ Բօլգարիան չէր յայտարարի իր անկախութիւնը, իսկ Աւստրիան չէր կատարի Բօսնիայի և Հերցէգովինայի միացումը։ Միաժամանակ ըստ երևոյթին կազմակերպվում են և կղերական մահմեդական խաւերը։ Մօտ օրերս Այա-Սօֆիա մզկիթում մի մեծ ժողով է գումարվել, որտեղ հաւաքվել են «Մահմեդական Դաշնակցութեան» անդամները, հոգևորականներ և օֆիցերներ։ Եղել են տաք ճառեր յօգուտ շարիաթի, իսլամի ոգու և սովորութիւնների պահպանութեան։ Վերջին ժամանակներս կղերական շրջաններում մատնացոյց են անում այն, թէ Հիլմի փաշան անհաւատ է, իսկ Ահմեդ Րիզան ֆրանկմասօն է (ֆարմասօն)։ Սակայն երիտասարդ-Թիւրքերի կոմիտէն առ այժմ բաւական ուժեղ է. դրան ապացոյց՝ վերջին լրացուցիչ պարլամենտական ընտրութիւնները Կ. Պոլսում, որում երիտասարդ-Թիւրքերի թեկնածու Րիֆադ փաշան յաղթութիւն տարաւ ընդդէմ ազատամիտների դաշնակցութեան կողմնակից Ալի Քեմալի ստանալով 281 ձայն ընդդէմ 121-ի։ («Р.В.»)

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ԹԻՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻՑ

—

Էրզրում, 22 մարտի

Քաղաքից 3 ժամ հեռաւորութեան վրա գտնվող Կոճնկոց գիւղին սերմացուի համար յատկացրել են 3000 ղրուշ։ Այս գիւղի 20 տունը հայեր են, 3-ը միայն Թիւրքեր։ Գիւղի «արդարասէր» իխտիար-մուխթարները ուզում են յիշեալ գումարը բաժանել այսպէս. 20 տուն հայերին 2000 ղրուշ, իսկ 3 տուն Թիւրքերին 1000 ղրուշ։ Հայ գիւղացիք ուր անկ է՝ բողոքել են այդ անիրաւ կարգադրութեան դէմ։ Տեսնենք ինչ հետևանք է ունենալու։ Միւս գաւառակներից և գիւղերից դեռ ևս յիշեալ խնդրին վերաբերեալ նոր լուրեր չը կան. 46,000 օսմ. ոսկու գումարը, որ յատկացված է սերմացուի համար, եթէ յիշեալ անխիղճ ձևով բաժանվի, անշուշտ հայ գիւղացիութիւնը իրան բաժին ընկած արդար իրաւունքից զրկվելու է։ Չը մոռանանք յիշել, որ այդ գումարը փոխ է տրվում 6% տոկոսով։ Այսպիսի անախորժ անիրաւութիւնների առաջն առնելու համար շրջիկ քննիչ յանձնաժողովների կարիքը խիստ անհրաժեշտ է, որոնք պէտք է ընտրվեն գիւղացիութեան կարող և անկաշառ անձերից։

«Պարապ եմ, տար դեարդն եմ»,—ահա այս է իւրաքանչիւր կարիքաւոր քաղաքացու ցաւալի շիշտը, բղխած վիրաւոր հէգ սրտերի կսկծալի՝ իրողութիւնը... որովհետև աղքատութիւն է և անպատմելի անգործութիւն։ Բարեբաղդաբար սահմանադրական րեժիմի հաստատման շնորհիւ Կարսի սահմանից տեղս խիստ շատ ալիւր եկաւ։ Օսմ. կառավարութիւնը մաքս չէ վերցնում, որով ստիպմանաբար հացի գինը պակասեց. եթէ ոչ՝ օխան (3 ֆունտ) մինչև 3 ղրուշ պիտի բարձրանար հացի գինը։ Անցեալ աշնան հացը թէև խիստ պակաս էր, սակայն վաշխառու միւլթէզիմները (կալպակառու) արհեստական սղութիւն առաջացրին։ Համատարած չքաւորութիւն է տիրել քաղաքիս ամեն դասակարգերին։ «Զանըմ, ինչ հիւրիէթ մեր աս քաղցած ու յուսահատ վախտը. երանի... չըլլէր մեր աս հիւրիէթը. Թեաք (միայն թէ) առատ գործ, քեար, վաստակ ըլլէր, մեր չօլուղ չօջուղն աքան մահրում (զրկանք) չապրեցնէինք, միւխէնէթի էնթաջ չըլլէինք, ձեռք չերկնցընէինք...»։ Ժողովրդական անհատների այսպիսի տրտունջները խիստ ցայտուն և իրաւացի ապացոյցով պատկերացնում են Թիւրքահայի մերկ ու այլանդակ ներկայ իրականութիւնը։ Հարստահարված մասսաները իսկապէս շատ բարիքներ էին սպասում, սակայն կարծես հիասթափված՝ տրտունջներ են սկսել ընդդէմ հիւրիէթին... Այսպիսով ռէակցիան ուժեղանալու մտահոգութիւնը տանջում է համոզված սահմանադրականներին։

Շատ վաղուց է, ինչ Վանում երևացել է նաւթահոր. Այնտեղ վերջերս, ասում են, հայ-Թիւրք համաձայնութեամբ մի ընկերութիւն է կազմվել յիշեալ նաւթը շահագործելու համար։ Էրզրումի նահանգի մի քանի գաւառակներում և գիւղերում երևացել են երկաթի, պղնձի, Թիթեղի և քարածուխի հանքեր, մինչև անգամ ոսկու և արծաթի հանքի տեղեր են գտնված, ասում են։ Դերջանում և մի քանի ուրիշ վայրերում նաւթ է երևացել։ Ինչպէս նաւթային ֆօնտանների տէր, նոյնպէս և այլ հայ ֆիրմաների ուշադրութեանն արժանի է մեր կողմերի այս բոլոր բնական հարստութիւնների շահագործումը։ Ի միջի այլոց չը մոռանամ յիշել և այն, որ այստեղ մանաւորապէս կաշեղէնի չափազանց սպառում կայ, և եւրոպացիք մինչև այսօր անարգել շահագործում են։ Եթէ, օրինակ, եղբ. Զարգարեանները, որ Թիֆլիսում կաշու գործարան ունեն և յայտնի մասնագէտ են կաշեղէնի, Էրզրումում կաշու գործարան բաց անեն, մեր կարծիքով, մինչև իսկ կարող են մրցել եւրոպացոց հետ և մեծ աջողութիւն ձեռք կը բերեն։

Հայ ֆիրմաները ռուսական տիրապետութեան սահմաններում առանց այն էլ իրանց պատուաւոր դիրքն ունեն, սակայն նրանք, որոնք շահագրգռված կը լինեն մեր կողմերում հայ կուլտուրայի բարգաւաճմանը նպաստելու և մեր ցեղի տնտեսական առաւելութիւնները բարձր պահելու նախանձախնդրութեամբ, թող ձգտեն այդ համակրելի աշխատանքին, համոզված լինելով որ մօտիկ ապագայում անպատճառ արդիւնքներ պիտի ձեռք բերեն։ Շաւարշ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻԿԱՅ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՀԱՄԱՐ

—

Այսօր, ուրբաթ, ապրիլի 3-ին, բացվում է Թիֆլիսում տնայնագործական համագումարը։

Բացումը նշանակված է առաւօտեան 11 ժամին Կայսերական Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան դահլիճում։

Առաջին նիստում Ա. Քալանթար կը կարդայ զեկուցում «Տնայնագործութեան հիմնական խնդիրների մասին»։

Երեկոյեան նիստում իշխանուհի Մ. Թումանեան կը կարդայ զեկուցում «Գորգագործութեան կենտրոնական դպրոցի կարևորութեան մասին»։

Բացի մեր յիշած պատգամաւորներից եկել են Նախիջևանի Գէօմուր գիւղի Տնայնագործական Ընկերութեան կողմից ուսուցիչ պ. Ղարախանեան, Կովկ. Հ. Բարեգ. Ընկերութեան Վաղարշապատի ճիւղի կողմից Ս. Օհանջանեան։

Ազգագրական Ընկերութեան կողմից ընտրված է ներկայացուցիչ Ե. Լալայեան։

«Լոյս» ընկերութիւնը իր կողմից ընտրել է ներկայացուցիչներ՝ Գ. Լևոնեանին, Կ. Բաքայեանին և Ս. Մելիք-Այվազեանին։

Զեկուցումներ ուղարկել են Շուշու արհեստանոցի վարչութիւնն այդ արհեստանոցի պատմութեան և գործունէութեան մասին, Ղարաքիլիսան մի քանի կարևոր հարցերի մասին։

Գ. Լևոնեան պատրաստել է մի զեկուցում «Ոճը և գոյները» վերնագրով։

ՏԻԿԻՆ ՍԻՐԱՆՈՅՇԻ XXXV-ԱՄԵԱՅ ԲԵՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

—

Վաղը, ապրիլի 4-ին, տիկին Սիրանոյշը տալու է մի ներկայացումն («Մէդէա») իր բեմական 35-ամեայ գործունէութեան առիթով։

Մենք կը կամենայինք այդ առիթով մի քանի խօսք ուղղել Թիֆլիսի հայ հասարակութեանը։

Թիֆլիսի հայ հասարակութիւնը յաճախ վայելել է տաղանդաւոր դերասանուհու, հայ բեմի այդ առաջնակարգ ոյժի գեղարուեստական խաղը մայրենի բեմի վրա։ Եւ սակայն Թիֆլիսի հայ հասարակութիւնը այս տարվայ յունվարին, երբ Բագւում հանդիսաւոր կերպով տօնվում էր նրա յոբելեանը, շատ չնչին մասնակցութիւն ունեցաւ այդ յոբելեանին, իսկ նիւթական աջակցութեան կողմից ոչ մի քայլ չարեց։

Գուցէ հանգամանքները և պայմանները այդ ժամանակ աննպաստ էին. չը ծանրանանք այդ խնդրի վրա։ Բայց այսօր, երբ տիկին Սիրանոյշ ինքնաբերաբար տալիս է մի ներկայացումն, մի՞թէ այսօր Թիֆլիսի հայ հասարակութիւնը իր բարոյական սեպուհ պարտականութիւնը չի համարի ներկայ լինել այդ ներկայացմանը և գէթ այս անգամ նիւթապէս և բարոյապէս խրախուսել մայրենի բեմի քանքարաւոր և բազմավաստակ գործչին, հայ բեմական մշակին, որի նմանը գուցէ դեռ երկար տարիներ վիճակված չէ լինելու հայ բեմին տեսնել։

Եթէ այս անգամ ևս հայ հասարակութիւնը, մանաւանդ հայ ինտելիգենտ հասարակութիւնը, գլանայ իր պարտքը կատարել, նա միայն ցոյց կը տայ իր բարոյական կատարեալ անկուլտուրութիւնը և կը հաստատէ այն իրողութիւնը, թէ մեզանում յոբելեանների և վարձատրութիւնների արժանանում են միայն նրանք, որոնք ճարպիկութիւն են ունենում րոպէին յարմարեցնել իրանց տաղանդը և ձիրքը։ Հ. Ա.

ԳՕԳՕԼԻ ԾՆՆԴԵԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԸ *)

(Նամակ Մօսկվայից)

Երևի ընթերցողը չէ մոռացել, որ տեղս կազմվել է մի յանձնաժողով՝ տօնելու մեծ գրողի ծննդեան հարիւրամեակը և մահարձան կանգնեցնելու Գօգօլին Մօսկվայում։ Այդ յանձնաժողովը, որի մէջ բացի քաղաքային վարչութեան ներկայացուցիչներից՝ մտել են նաև Մօսկվայի ռուսաց գրականագէտների ընկերութիւնն և կայսերական համալսարանը, իր ժամանակին յայտարարել էր, որ այսօր Գօգօլի ծննդեան հարիւրամեակի առիթով տեղի են ունենալու պատարագ և հոգեհանգիստ, իսկ այնուհետև գերեզմանի վրա ճառեր։ Խօսել ցանկացողները կամ պսակ դնողները պէտք է նախօրօք գրվէին կարգադրիչ յանձնաժողովի մօտ. բացի այդ, ներկայ լինել ցանկացողները նոյնպէս պէտք է նախօրօք յայտնէին, քանի որ գերեզմանատան տեղի քչութեան պատճառով՝ հասարակութեան մուտքը լինելու է տոմսակներով։

Տողերիս գրողը կամենալով ներկայ լինել այդ օրը կատարվող հանդիսին, դիմեց քաղաքային վարչութեանն և խնդրեց տալ իրան՝ իբրև «Մշակի» թղթակցի՝ մուտքի տոմսակ՝ տեղ ունենալու մամուլի ներկայացուցիչների և պատգամաւորութիւնների մէջ։ Իմ խնդիրը, քաղաքագլուխ պ. Գուչկովի կարգադրութեամբ, իսկոյն եւեթ յարգվեց կարգադրիչ յանձնաժողովի կողմից։

---

*) Տես «Մշակ» № 66.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲՕՍՖՈՐԻ ԱՓԵՐԻՑ

XVIII

Կ. Պոլիս, 26 մարտի

Անցեալ նամակումս, նկարագրելով «Իթթիհադի» և «Ահրարի» միջև մղվող մահացու պայքարը, հրճւում էի, որ կռքերի արտակարգ բորբոքումը չէ դրդում դիմելու երկու կողմերին կուր մի այնպիսի զարհուրելի ու անարգ միջոցի, ինչպէս տերրորն է...

Իրականութիւնը գալիս է այսօր ցոյց տալու, աւաղ, որ շատ շուտ եմ յաղթանակել...

Հէնց այս րոպէիս եմ վերադառնում յուղարկաւորութեան հանդէսից մի անձի, որը ընկաւ տերրորիստի գնդակի տակ, ողբերգական ու գարշելի մահով։

«Իթթիհադը» նրա մէջ տեսաւ իր ամենակատաղի թշնամուն և տխմարօրէն խփեց։

Խփեց մի օր առաջ կէս գիշերին, Ղալաթիայի կամուրջի վրա, երբ նա անց էր կենում իր բարեկամներից մէկի ընկերակցութեամբ։

Զոհը, Հասան Ֆէհմի-բէյ, «Սէրբէսդի» լրագրի գլխաւոր խմբագիրը, 30—35 տարեկան մի վառվռուն երիտասարդ էր։ Ճանաչում էի նրան բաւական մօտից։ «Իթթիհադի» անդամ, մի ժամանակ գործակցել էր Ահմէդ Րիզայի և Մուրադ-բէյի հետ, Պարիզում։ Յետոյ երբ Մուրադը բաժանվել էր Րիզայից և պատասխանելով սուլթանի հրաւէրին Պոլիս վերադարձել, Հասան Ֆէհմին նոյնպէս հեռացել էր «Իթթիհադից» և հաստատվել Եգիպտոսում։ Կահիրէում Ֆէհմին լոյս էր ընծայել «Էմէլ» անունով մի թերթ, որը երկար կեանք չունեցաւ, և սահմանադրութեան հռչակումից յետոյ եկել էր Պոլիս։

Այստեղ նա՝ «Սէրբէսդիի» տնօրէն-խմբագիր Մէվլան-զադէ Րիֆաթ-բէյի հետ մտել էր «Ֆէդաքեարանը Միլլէթ» ընկերակցութեան մէջ և վարել Րիֆաթ-բէյի հետ նոյն ընկերակցութեան օրգան՝ «Հուքուկը Ումումիէ» թերթը։

Յետոյ, հեռանալով «Ֆէդաքեարանը Միլլէթից» և «Հուքուկը Ումումիէից», հիմնել էին «Սէրբէսդին»։

«Իթթիհադի» ընդդիմադիր օրգանների շարքում, ինչպէս նկարել եմ նախորդ նամակումս, ամենից անզուսպն ու ամենից կատաղին էր «Սէրբէսդին»։ Դժբաղդաբար, որքան բուռն էր այս թերթը, նոյնքան տարված՝ անձնականութիւնների դէմ կռւում։ Ես պատմել եմ ձեզ, թէ ինչպէս Րիֆաթ-բէյը իր մի ճառում «Իթթիհադի» վարիչներին անուանել էր գողեր, աւազակներ, հարիւրաւոր անձանց առաջ։

«Սէրբէսդին» տանում էր պայքարը «Միութիւն և Առաջադիմութիւն» կուսակցութեան դէմ նոյն ոգով, նոյն մոլեգնութեամբ։

Ծանօթ լինելով և՛ Հասան-բէյի, և Մէվլան-զադէի հետ, մի օր, «Սէրբէսդիի» խմբագրատանը, զգուշացրի, թախանձելով խորհուրդ տուեցի նրանց, որ հրաժարվեն այդ ձևի պայքարից.

— Լաւ չէք անում, բարեկամներ,—ասացի նրանց ի միջի այլոց,—կենտրոնացնելով կռիւը անձնականութիւնների շուրջը։ Թողէք անձերին և ձեր նետերն ուղղեցէք հասկացողութիւնների, գաղափարների, սկզբունքների դէմ։ Ես խօսում եմ ձեզ մեր, հայկական կեանքի, տխուր փորձառութիւնից։ Անձնականութիւնների շուրջը մղված թունալից պայքարը ծնունդ է տալիս ցաւալի ու եղերական դէպքերի. գրչի հարուածներին յաջորդում են զէնքի հարուածները.. Կը սպանեն ձեզ, թողէք այդ ձևի պայքարը...

Նրանք ժպտացին, բարեկամաբար թիկունքս ծեծեցին և պատասխանեցին.

— Մի վախենաք, ոչինչ չի լինի. Նրանք այդպիսի բան չեն կարող անել, այդքան քաջութիւն չունեն...

Այժմ ժպտալու հերթը իմն էր. բայց էլ ժպտացի և մեկնելիս դարձեալ կրկնեցի իմ նախազգուշացումները։

Նախազգուշացում, որն արդէն դժբաղդ իրողութիւն է այժմ և յուզում է ամբողջ մայրաքաղաքը։

Տերրորիստն եղել է, ինչպէս հաւաստում է սպանվողին ընկերացող և վիրաւորված բարեկամը, մի զինւորական։ Հակառակ այն բանին, որ կամուրջի երկու եզերքների մօտ գտնվում են պահականոցներ և կամուրջի վրա ծովային զինւորներ, տերրորիստը չէ բռնված։ Իբրև տիրապետող կուսակցութիւն, որ իր ձեռքին ունի նաև գործադիր իշխանութիւնն ու նրա վարիչներին, «Իթթիհադը», ըստ երևոյթին, պիտի մարսէ այդ ոճիրը, անպատիժ։

Բայց նա գրգռել է մի այնպիսի զայրոյթ, որն աննկարագրելի է և որի հսկայական արտայայտութիւնն եղաւ այսօրվայ յուղարկաւորութիւնը։

Ներկայ էին տասնեակ հազարաւոր անձինք, որոնց շարքում կուսակցութիւնների և թերթերի ներկայացուցիչներ։ Մի բարեկամ ասում էր, որ յուղարկաւորութեան հետևում էր նաև... «Իթթիհադի» վարիչներից մէկը, շատ հասկանալի շարժառիթներով, անկասկած։

Թափօրը՝ «Սէրբէսդիի» խմբագրատնից սկսեց և բարձրանալով Բ. Դրան հռչակաւոր պողոտայով և անցնելով, իբրև բողոքի ցոյց, ոստիկանութեան գլխաւոր վարչութեան տխրահռչակ շինութեան առջևից՝ կանգ առաւ Այա-Սօֆիայի հրապարակում, խորհրդարանի հանդէպ։ Յուղարկաւոր թափօրի անցքի վրա մի քանի Թիւրքական տներից պայթեցին ողբ ու կոծի սրտաճմլիկ աղաղակներ, որոնք սարսռացրին բիւրաւոր ամբոխը։ Երևի հանգուցեալի ազգականներն էին ու բարեկամները։

Դագաղը բաւական ցուցադրվեց խորհրդարանի առաջ, որի պատուհանները լցվել էին պատգամաւորներով ու սենատորներով։ Այնուհետև ողբասաց դէրվիշների երգեցողութեամբ դագաղը փոխադրեցին Այա-Սօֆիայի մզկիթը կրօնական արարողութիւնների համար։

Դրսում ամբոխը վիճում ու վիճաբանում էր ոգևորութեամբ։ Մեղադրում ու դատապարտում էին «Իթթիհադը»։ Ոմանք պնդում էին, որ Ահմէդ Րիզան՝ վախենալով ցոյցերից՝ այսօր փախել է Բէյքօզ, Բօսֆորի արուարձաններից մէկը, նախագահութիւնը թողնելով իր փոխանորդին։

Arago

(Վերջը միւս անգամ)

Առաւօտեան 10 ժ. պէտք է սկսվէր պատարագը։ Ես մեկնեցի 9 ժամին, և չը նայած վաղ լինելուն, գերեզմանատան թէ ներսը և թէ դուրսը անագին հասարակութիւն էր հաւաքված։

Օրը շատ տաք է. փողոցները համարեա թէ չոր, շատերը առանց վերարկուների և կրկնակօշիկների։ Կատարեալ գարնանային եղանակ է։ Էլէքտրաքարշն ու ձիաքարշը, հանրակառքերն ու կառքերը սրընթաց արշաւում էին դէպի Դանիլօվ վանքը. մայրաքաղաքի այդ մասը բաւական կենդանացել և արտասովոր բնաւորութիւն է ստացել։ Կան բազմաթիւ ոստիկանական պաշտօնեաներ։

Ուղիղ 10 ժամին եկաւ Անաստասիա եպ., որին դիմաւորեց վանքի ներսում գտնված հոգևորական դասը։ Ճիշդ նշանակված ժամին սկսվեց պատարագը. պատարագիչ եպիսկոպոսին զգեստաւորեցին վանքի կենտրօնում՝ հասարակութեան ներկայութեամբ։ Սա ինձ համար, գոնէ, նորութիւն էր։

Պատարագին ներկայ էին 4 եպիսկոպոս, 4 վարդապետ, բազմաթիւ քահանաներ և սարկաւագներ, Մօսկվայի գեներալ-նահանգապետ Գերշելմանն իր օգնական գեն. Գլազօվի հետ միասին, քաղաքապետ Անդրիանօվ իր օգնական պ. Մօլլի հետ, գրենադերեան կորպուսի պետ պ. Էկկ, քաղաքագլուխ պ. Գուչկօվ, Մօսկվայի ուսումնական շրջանի հոգաբարձու պ. Ժղանօվ, կայսերական համալսարանի տեսուչ պրոֆ. Մանուիլօվ, նրա օգնական պ. Մենզբիր, Շանեավսկու անուան ժողովրդական համալսարանի ներկայացուցիչը, ռուսաց գրականագէտների ընկերութեան անդամները յանձին Գրուզինսկու, Զլատօվրատսկու և Կալլաշի, կայսերական Փոքր և Գեղարուեստական թատրօնների ներկայացուցիչները, Կայսերական Երաժշտական Ընկերութեան, պարբերական մամուլի և գրականութեան, կօնսերվատօրիայի, Գրականագէտներին Նպաստող Ընկերութեան, ժողովրդական և միջնակարգ դպրոցների ներկայացուցիչները, պրոֆեսօրներ պ. պ. Մենակօվ, Նօվգորոդցեվ, Բուլգակօվ, Կիզեվետտեր, Կեստեակօվսկի և ուրիշները, բազմաթիւ ուսանողներ և ուսանողուհիներ, միջնակարգ դպրոցների սաներ, կանայք և շատ-շատերը։

Պատարագից յետոյ, որտեղ երգում էր սինօդական խումբը պ. Սօլնցեվի ղեկավարութեամբ, Անաստասիա եպ. մի քարոզ խօսեց, մատնանշելով հանգուցեալ Գօգօլի արած խոշոր ծառայութիւնը, ասելով որ Գօգօլը երկար տարիներ ամենակատաղի կերպով կռիւ է մղել անարդարութեան, կեղծիքի և չարութեան դէմ, որ նա ճշմարտութեան համար կռւող անվեհեր զինուոր է եղել։

Այնուհետև, քարոզից յետոյ, տեղի ունեցաւ հանդիսաւոր հոգեհանգիստ խուռն բազմութեան ներկայութեամբ. հոգեհանգիստը կատարեց Մօսկվայի Թեմակալ առաջնորդ Վլադիմիր եպիսկոպոսը։

(Կը շարունակվի)

ՄԻ ԷՔՍԿՈՒՐՍԻԱ

Կիրակի, մարտի 22-ին, գիշերվայ գնացքով Թիֆլիսից Բաթում մեկնեցին պ. Նեվտօնօվի առաջնորդութեամբ իգական առաջին գիմնազիայի ութերորդ դասարանի աշակերտուհիները թւով մօտ 70 հոգի։ Ուղեկցում էին վերատեսուչը, դաստիարակչուհին և ուսուցիչներ։ Ճանապարհորդութեան նպատակն էր ծանօթացնել Բաթում քաղաքի զանազան մասերի հետ։

Դեռ գիշերվայ ժամը 10-ից կամաց-կամաց հաւաքվում էին կայարանում աշակերտուհիները։ Երբ Բագուից եկաւ գնացքը և միմիայն աշակերտուհիներին իրաւունք տուին դուրս գալու, այնպիսի մի աղաղակ բարձրացնելով դուրս թափվեցին, որ կարծես գերիները են ազատ արձակւում բանտից։ Եկաւ և մեկնելու ժամը, հէնց որ երկաթուղին տեղից շարժվեց, աշակերտուհիները բարձրաձայն «ուրա»-ի հետ միախառնելով ծուղ-ծկլտոց՝ այնպիսի մի իրարանցում էին գցել, որ եղած հասարակութիւնը իր ականջները խնայելու համար նրան ծածկում էր։ Arthur

ԻՒՐ. ՎԵՍԵԼՈՎՍԿՈՒ ԵՒ Մ. ԲԵՐԲԵՐԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՏՕԼՍՏՕՅԻՆ *)

1893|4 թ. ձմեռը առաջին անգամ աջողվեց ինձ տեսնվել և զրուցել Լ. Ն. Տօլստօյի հետ, որ այդ միջոցին ապրում էր Մօսկվայում՝ Դօլգօ-Խամօվնիչեսկի նրբափողոցում։

Տօլստօյին այցելելու շարժառիթը եղաւ «Հայ վիպասաններ» ժողովածուի առաջին հատորի լոյս տեսնելը, հրատարակված տողերիս գրողի և պ. Բերբերեանի ձեռքով (այժմ Էջմիածնի հայոց ճեմարանի տեսուչ և գրականագէտ), և «ռուս աշխարհի մեծ հեղինակին» այս հաւաքական աշխատանքը նուիրելու ցանկութիւնը, հեղինակի, որի երկերը յաճախ հրապուրել և ոգևորել են հայ հեղինակներին։

Յիշողութեանս մէջ մեկին է մնացել և մեր խօսակցութիւնը, և շրջապատի զանազան մանրամասնութիւնները, նեղ, կիսախաւար միջանցքը, որ միացնում է Լ. Ն.-ի պարապելու սենեակը տան մնացած մասի հետ, ցածլիկ, միայն մի մոմով լուսաւորված սենեակը, որ այդ երեկոյ չափազանց ցուրտ էր և որի համար Լ. Ն. իսկոյն զգուշացրեց մեզ. դռներից դէպի ձախ՝ գրասեղանը, փոքրաթիւ գրքերով և ձեռագրերով, դէպի աջ՝ մի քանի աթոռ և կաշեպատ բազկաթոռներ, կլոր փոքրիկ սեղան, որի վրա մոմն էր գտնվում, բաց արած ամբողջ մի կոյտ ուրիշ գրքերի, ապա կաշեպատ բազմոց, որի առաջ դրված էր կլոր մեծ սեղան մարմարէ տախտակով…

Ես և պ. Բերբերեանը (այն ժամանակ դեռ ուսանողներ վերջին կուրսի) առանց յուզմունքի չը մտանք այդ միջանցքով. որի ծայրին գտնվում էր մեծ հեղինակի սենեակը տանող կիսաբաց դուռը… Երբ ուղիղ շեմքի մօտ տեսանք ծանօթ դէմքը՝ ուսին գցած մոխրագոյն խալաթ, որի տակից երևում էր սովորական մուգ գոյնի բլուզը, իսկ Լ. Ն. սևեռելով մեզ վրա իր արտայայտիչ աչքերը՝ արտասանեց, որ ուրախ է մեզ տեսնելու համար և խնդրում է ասել, թէ ինչի՞ մասին ենք ուզում զրուցել իր հետ,—մեր յուզմունքն աւելի ևս մեծացաւ…

Բայց քիչ յետոյ արդէն ազատ զրուցում էինք։

Տօլստօյի հարցերից առաջինը, երբ նա իմացաւ, որ մեր գալուստը կապ ունի հայոց գրականութեան և հայոց հարցի հետ, հետևեալն էր.

— Իսկ այն… հայկական ընկերութիւնը… կամ շրջանը… դեռ գոյութիւն ունի՞. ինչպէս է գործում այժմ։

Մենք կարծեցինք, որ Լ. Ն. ի նկատի ունի հայ-ուսանողական համերկրացիական միութիւնը, և շտապեցինք ծանօթացնել նրան այդ միութեան նպատակներին և հարցերին, մատնանիշ անելով՝ որ այն գոյութիւն ունի չքաւոր ընկերներին օգնելու համար միայն։

— Բոլորովին այդ չեմ ասում,—առարկեց Լ. Ն.-ը,—ինձ պատմել են ինչ-որ ընկերութիւնների կամ շրջանների մասին, որ հետամուտ են գլխաւորապէս հայրենասիրական. ազգային նպատակի, ցանկանում են կռիւ մղել Թիւրքահայերի ազատութեան համար։

Մենք ասացինք, որ յիրաւի այդպիսի կազմակերպութիւններ կան, որ զբաղվում են Թիւրքիայի հայերի վիճակը բարւոքելու և կամ նրանց լիակատար ազատութեան հարցով։

— Այդ է, այդ է,—ասաց Լ. Ն.,—ինձ շատ է հետաքրքրում այդ հարցը. հետաքրքրական է իմանալ՝ ինչպէս են պատրաստվում նրանք փրկելու իրանց եղբայրներին Թիւրքիայում։

— Որոշ շրջաններում այժմ ընդունելութիւն է գտնում այն համոզմունքը, որ ի նկատի ունենալով անելանելի վիճակը Թիւրքահայերի, որոնց անպատիժ կերպով կեղեքում են և բռնակալ անասունի վիճակին հասցնում, միակ ելքը և փրկութեան ճանապարհը՝ ընդհանուր ապստամբութիւնն է։ Ներկայ պայմաններում նոյնիսկ չը պէտք է զարմանալ, որ այդպիսի մի սկզբունք կողմնակիցներ է գտնում։

— Էհ,—բացագանչեց Լ. Ն. աւելի և աւելի աշխոյժանալով և, ինչպէս երևում էր, պատրաստվելով առարկելու.

— Սակայն անցեալում օրինակներ, կան, պատմութիւնը հակադէպ ցոյց չէ տալիս մեզ,—ասաց մեզանից մէկը։

— Ահա հէնց այդ է սովորական, շատ տարածված սխալը. իսկապէս պատմութիւնը երբեք չէ կրկնվում, այդ մասին նոյնիսկ լուրջ խօսել կարելի չէ. վերջապէս նոյնիսկ այդ պայքարի իսկական հիմքը սխալ է և խախուտ։ Բոլոր այդ խմբակները ոգևորված են հայրենասիրութեամբ։ Բայց չէ որ հայրենասիրութիւնը մեր օրերում մեռած բան է։

— Հայրենասիրութիւնն այդ դէպքում հանդիսանում է միայն իբրև մի միջոց ամբոխին ոգևորելու համար։ Բայց նպատակն, ի հարկէ, ժողովրդի փրկութիւնը և բազմակողմանի զարգացումն է։ Թոյլ տուէք ի դէպս, գերարգոյ Լ. Ն., մատուցանել ձեզ մեր այս տարի հրատարակած «Հայ վիպասաններ» գրական ժողովածուն։ Այդտեղ կարող էք ծանօթանալ հայերի ներկայ կացութեան, հարցերին և կարիքներին։

Եւ մենք «Հայ վիպասանների» առաջին հատորից մի օրինակ մատուցինք Լ. Ն.-ին։

— Շատ ու շատ հաճելի և հետաքրքրական է,—ասաց նա,—անպատճառ կը ծանօթանամ այս երկերի հետ, որ ինձ բոլորովին անյայտ են։ Շնորհակալ եմ, բայց ասացէք բոլորը, ինչ որ կայ այս մեծածաւալ գրքում, նոյն հայրենասիրական գաղափարներով են ներշնչված, որոնց մասին այժմս խօսք եղաւ։

«Հայրենասիրական» բառը Լ. Ն. արտասանեց հեգնանքի նուրբ երանգով։

Մեզանից մէկը պատասխանեց.

— Յիրաւի երկերի մեծ մասի մէջ այդ գաղափարներն են արտացոլում։ Բայց կան և զուտ գեղարուեստական, իրական և հոգեբանական գործեր։ Պատրաստվում է կըրկին մի ժողովածու հայ նորագոյն հեղինակներից. որոնցից մի քանիսը հայրենասիրական միտումաւոր ժանր չունեն, այլ ուշք են դարձնում հոգեբանական վերլուծութեան վրա։

— Արդեօք դուք բոլորովին անաչառ էք,—յանկարծ դիմեց Լ. Ն.-ը պ. Մ. Բերբերեանին։ Չէ՞ որ շատ անգամ դժուար է լինում առարկայօրէն դատել այն, ինչ որ մեզ մօտիկ է և թանգագին… Արդեօք դուք չէ՞ք չափազանցում այդ գրականութեան արժէքը, մի քանի հեղինակների չէ՞ք համարում աւելի տաղանդաւոր և ականաւոր, քան որ իսկապէս են։

— Այդ մասին կարող է ձեզ բացատրութիւն տալ ընկերս,—ասաց պ. Բերբերեանը՝ մատնացոյց անելով ինձ.—Նա որպէս ռուս կարող է հայ գրականութեան մասին բոլորովին անաչառ դատել։

— Հա՛, ուրեմն դուք հայոց գրականութեամբ էք զբաղվում։ Ի՞նչ կասէք դուք նրա գեղարուեստական արժանիքների և ընդհանրապէս նրա նշանակութեան մասին։

Ես ասացի, որ զբաղվում եմ հայոց գրականութեամբ, շատ եմ հետաքրքրվում նրանով և որ թէև հայոց գրականութիւնը, իբրև աւելի մատաղը, չէ կարող համեմատվել ուրիշ գրականութիւնների հետ, որոնք ժառանգական աւանդութիւններ և իդէալներ ունեն, բայց անշուշտ նրա մէջ կան հետաքրքրական երկեր՝ ոչ միայն գաղափարական այլ և գեղարուեստական տեսակէտից։

— Այստեղ, մեր գրքում առաջին տեղը տրված է յայտնի վիպասան Րաֆֆուն, որ անկասկած տաղանդ է ունեցել։ Բայց պատկերացնելով Թիւրքահայերի թշուառ վիճակը՝ նա կարծում է, որ ապստամբութիւնը միայն կարող է նրանց փրկել…

— Է, յիրաւի՞ այդքան անելանելի է Թիւրքահայերի վիճակը, ինչպէս պնդում են,—հարցրեց Լ. Ն.,—չափազանցութիւն չը կա՞յ։ Բայց ենթադրենք, որ այդ բոլորը ճիշդ է։ Բայց անտարակոյս այդ ճնշման մասնակցում են հէնց իրանք՝ հայերն էլ։ Ուզում եմ ասել, որ նրանց զօրեղները և ունևորները ճնշում են իրանց եղբայրներին Թիւրքերից և քիւրդերից ո՛չ պակաս… Այստեղ հարցը ազգութիւնը չէ։ Դուք ասում էք, որ Րաֆֆին և մի քանի ուրիշ հեղինակներ Թիւրքահայերի միակ ելքը ապստամբութիւնն են համարում։ Բայց ինչ դուրս կը գայ այդպիսի ապստամբութիւնից։ Արդեօք կը բարւոքվի՞ ժողովրդի վիճակը։ Ահա ձեզ պարզ օրինակ՝ Բուլգարիան։ Իմ ծանօթներից մէկը, որ ուսումնասիրել է այդ խնդիրը, ասում է ինձ, որ նոյնիսկ Թիւրքական գերիշխանութեան ժամանակ Բուլգարիան աւելի երջանիկ է եղել, քան այժմ, ազատվելուց յետոյ. հասարակ ժողովուրդը գոնէ աւելի լաւ է ապրել։ Սա մի փաստ է, որի վրա արժէ մտածել… Մի մոռանաք նմանապէս, որ բուլգարների ապստամբութիւնը պատահական կերպով պսակվեց աջողութեամբ. այդ ելքը շատ հեշտութեամբ կարող էր բոլորովին այլ տեսակի լինել, ինչպէս և յաճախ պատահել է։

Մեզանից մէկն ասաց.

— Իսկ ի՞նչ կասէք Յունաստանի մասին. նրա վիճակը Թիւրքական լուծը խորտակելուց և ինքնուրոյն պետութիւն կազմելուց յետոյ բարւոքվե՞ց։

— Ոչ միայն Յունաստանը, այլ և Իտալիան է գտնվում ներկայումս վատթար վիճակում, քան առաջ,—առարկեց Լ. Ն.,—օրինակ Իտալիան. կատարեալ դեկադանս. ժողովրդի վիճակն իսկապէս զարհուրելի է։ Մենակ ազատութիւնը և քաղաքական ինքնուրոյնութեան հասնելը դեռ ոչինչ չէ նշանակում։ Այն դեռ ժողովրդին չէ բաղդաւորեցնում և կեղեքումն ու յափշտակութիւնը չէ վերացնում։ Վաղը թող ազատվի Թիւրքահայաստանը, և մի ուրիշ կառավարութիւն կը ճնշէ աղքատներին և թոյլերին։ Ինչ կառավարութիւն էլ լինի՝ հայկական, ռուսական, ֆրանսիական՝ իրապէս միևնոյն է…

— Գուցէ ձեզ հետաքրքրական է իմանալ, Լ. Ն., որ հայերի մէջ կայ և մի այլ հոսանք, որի կուսակիցները միայն քաղաքական հարցերով չեն բաւականանում, այլ կանգնած են տնտեսական հողի վրա, ամենից առաջ աչքի առաջ ունենալով աշխատաւոր դասակարգի շահերը սօցիալ-դեմօկրատական սկզբունքներով…

— Է՛հ, մի ասէք,—ժպտալով, մի քիչ կնճռվելով ընդհատեց Լ. Ն.։—Առանց ծիծաղելու չեմ կարող խօսել այդ մասին։

— Բայց կարծում ենք, որ սօցիալիզմի հիմնական գաղափարը օտարոտի չէ ձեզ համար։ Կանգնելով մարդկանց հաւասարութեան և եղբայրութեան հողի վրա…

— Խնդրեմ, խնդրեմ։ Ի՞նչ հաւասարութիւն սօցիալ-դեմօկրատական կազմի մէջ։ Ի՞նչպէս կարող է այդ իրականանալ։ Չէ՞ որ փոքրամասնութեան դիզած հարստութիւնը մէկը պէտք է բաշխէ։ Եւ նա, ի հարկէ, սովորական մարդ կը լինի, որոշ թոյլ կողմերով և արատներով։ Երկնքից հրեշտակներ հօ չեն բերելու այդ բաշխման համար։ Ուրեմն քանի որ այդ բոլորը կարգադրելու են այս կամ այն մարդիկ, ենթադրենք հէնց ուրիշներից աւելի աչքի ընկնողները, ուստի այդ մարդիկ յամենայն դէպս կիշխեն։ Այդպիսով էլի հաւասարութիւն չի լինի։ Ո՛չ, դրա մասին չը պէտք է մտածել և Թիւրքահայերին ապստամբութեան չը պէտք է կանչել,—շարունակեց Տօլստօյը աւելի և աւելի ոգևորվելով և, ինչպէս երևում էր, աշխատելով համոզել մեզ, որ իր խօսքերն իրաւացի են,—այլ պէտք է նրանց և նրանց ճնշողներին մարդասիրական, զուտ քրիստոնէական գաղափարներ քարոզել։ Այդ միայն կարող է բարւոքել ժողովրդի վիճակը։ Խնդրեմ չը վախենաք այս խօսքերից։ Քրիստոնէութիւն ասելով չեմ հասկանում ինչ-որ միստիքական բան, այլ մէկ մարդու սէրը դէպի միւսը, նրանց եղբայրական, մտերիմ սէրը դէպի միւսը, նրանց եղբայրական, մտերիմ յարաբերութիւնները։ Ահա եթէ ազատութիւն քարոզող բոլոր հայրենասէրների ամբողջ եռանդը գործադրվի այս ուղղութեամբ, ըստ իս, աւելի լաւ օգտակար կը լինի. կասեմ՝ անհրաժեշտ է հէնց այդպէս անել…

— Բայց չէ՞ որ մարդասիրական այդպիսի քարոզը հնարաւոր է կեանքի նորմալ պայմաններում միայն և քիչ թէ շատ քաղաքակրթված մարդկանց մէջ, բայց ոչ այնպիսի բարբարոսների, ինչպիսին քիւրդերն են…

— Խնդրեմ, մի՞թէ քիւրդը մարդ չէ։ Ըստ իս, նա նոյնպիսի մի մարդ է, ինչպէս մենք ձեզ հետ, և մենք նրան սպանելու չունենք և ոչ մի իրաւունք։ Ինչո՞ւ էք կարծում, որ նա չի հասկանայ քրիստոնէական այդ քարոզը և չի գնահատի։ Ոչ, դուք կը տեսնէք, որ նա կը հասկանայ, և նոյնիսկ աւելի լաւ, քան մի բիւրոկրատ կամ թէ նոյնիսկ օրինակի համար մի աւագ պօլիցմէյստէր Վլասօվսկին։ Ես ինքս անձամբ աւելի շուտ յանձն կառնէի գթութիւն քարոզել քիւրդին, քան Վլասօվսկուն։ Կրկնում եմ, հայոց հայրենասիրութիւնը, ինչպէս և իւրաքանչիւր ուրիշը, կռապաշտութիւն է, որի դէմ պէտք է մաքառեն բոլոր հասկացող մարդիկ։

Քիչ յետոյ կրկին խօսքը դարձաւ «Հայ վիպասաններ» ժողովածուի մասին։

Լ. Ն. հարցրեց.

— Այն գործերը, որ դուք այստեղ թարգմանել էք, գրված են սովորական եւրօպական ոգով, թէ նրանց մէջ զուտ արևելցու կողմն էլ կայ։

— Այդտեղ կան թէ ընդհանուր եւրօպական նիւթ ունեցող երկեր և թէ ինքնուրոյն երկեր։ Նոյնիսկ հայ ժողովրդական հէքիաթների թարգմանութիւններ կան։

— Այդ շատ հետաքրքրական է։ Թերևս մնացած բոլորից հետաքրքրականը… Ի դէպս, ինչո՞վ էք դուք զբաղվում։ Յատկապէս գրականութեամբ։ Ո՞ր ֆակուլտետում էք,—դիմեց ինձ Լ. Ն.։

Ես պատասխանեցի.

— Շատ բարի,—բացագանչեց Լ. Ն.,—հարուստ է սքանչելի գրականութիւնը… Ափսոս միայն «Wita brewis, ars longa»։ Ո՞րքան լաւ, հետաքրքրական, հոգու վրա բարերար ազդեցութիւն թողնող բան կայ, բայց բոլորը կարդալ չես կարողանում, ժամանակը չէ ներում։ Ահա ես հետաքրքրութեամբ ուսումնասիրում եմ մեզանում բոլորովին անծանօթ մի հեղինակի՝ Ամիէլին։ Աղջիկս թարգմանել է նրա գրուածքը, ուղարկում ենք «Сѣверный Вѣстникъ»-ին։ Ես ցանկանում եմ թարգմանութիւնից առաջ յօդուած ուղարկել Ամիէլի մասին։ Բայց ափսոս որ նրա մասին քիչ տեղեկութիւններ կան։ Շնորհակալ եմ Ն. Ի. Ստորօժենկօյից։ նա այդ մասին ինչքան չը լինի՝ նիւթ է ուղարկել ինձ, թէ ոչ՝ չէի իմանայ ինչ անեմ։

— Ձեր խմբագրութեամբ, Լ. Ն., լոյս է տեսել Գի-դը-Մօպասանի պատմուածքների գրքոյկը,—ասաց Մ. Բերբերեանը։—Միւս հատորներն էլ լոյս կը տեսնե՞ն։

— Այո՛, էլի մի քանիսը… Տեսնո՞ւմ էք, Մօպասան, ըստ իս, Վիկտոր Հիւգօյից յետոյ նոր շրջանի լաւագոյն հեղինակն է։ Ես ինքս նրան շատ եմ սիրում և բոլոր ժամանակակիցներից բարձր եմ դասում։ Ես առաջաբան եմ գրել նրա երկերի հրատարակութեան համար։ Շուտով լոյս կը տեսնի։ Ես լիովին շարադրել եմ նրա մէջ իմ հայեացքը նրա ստեղծագործութեան և մասնաւորապէս նրա ձիրքի մասին։

— Ներեցէք, Լ. Ն., մի քանիսին շատ է զարմացրել, որ ձեր անունը այսպէս թէ այնպէս Ռուսաստանում Մօպասանի ստեղծագործութեան ժողովրդականացման հետ է կապված. մինչդեռ կարելի էր սպասել, որ դուք հազիւ թէ համակրութեամբ վերաբերվէք դէպի այդպիսի ուղղութեան և թէմաների այդպիսի ընտրութիւն ունեցող մի հեղինակ։

— Պէտք է ուղիղ տեսակէտ սահմանել Մօպասանի համար,—ասաց Լ. Ն.։—Նրա մասին շատերն են սխալ դատում։ Նա ոչ միայն աչքի ընկնող տաղանդ է, այլ և միակ հեղինակը, որը վերջապէս ըմբռնեց և վերաստեղծեց տղամարդու և կնոջ յարաբերութիւնների մէջև եղած ամբողջ բացասական կողմը։ Իսկ հէնց այդ է իսկական շնորհքը։ Սկզբում նա յիրաւի սխալվում էր և բոլորովին այլ կողմից էր նայում այդ բոլորի վրա։ Բայց յետոյ նա հասկացաւ իր սխալը, կարծես վերածնվեց։ Եւ ոչ ոք այնպիսի հմտութեամբ և նրա նման գեղարուեստականութեամբ չէ պատկերացրել բոլոր տառապանքները, բոլոր հոգեկան տանջանքները, որոնք ծնունդ են առնում դէպի կինն ունեցած սուտ վերաբերմունքից։ Յիշո՞ւմ էք, օրինակի համար, այն պատմուածքը, որի մէջ նկարագրում է, թէ ինչպէս մի նաւաստի յայտնի տան մէջ սպանեց իր հարազատ քրոջ։ Որքա՞ն մտքեր է յարուցանում այդ երկը։ Ինչքա՞ն խոր հետք է թողնում հոգու վրա։ Այդպիսի պատմուածքներն արդէն չեն կարող ընթերցողի մէջ համակրանք կամ հետաքրքրութիւն արթնացնել դէպի անառակութիւնը, ինչպիսի դուք էլ որ տանէք մեզ հեղինակը… Սակայն Մօպասանի մէջ կային ներքին այնպիսի հակասութիւններ, որոնք վաղ թէ ուշ նրան պէտք է տանէին դէպի ինքնասպանութիւն։ Ինչպիսի՜ դառնութեամբ է նկարագրում նա մարդկութեան մենակութիւնը և որբութիւնը։ Մռայլ տրամադրութիւնն իսկապէս երբեք նրան չը թողեց, և նա յաճախ նկարագրել է մենակ, դուրս ընկած, ոչ ոքի պէտք չեկող մարդու բաղդը։ Կարդացէք անպայման ամբողջ Մօպասանը և դուք կը գտնէք շատ նշանաւոր, վսեմ, խրատական բան,—ասաց Լ. Ն. մնաս բարևի ժամանակ, տեսնելով որ մենք պատրաստվում ենք գնալու։

Իւրի Վեսելովսկի

---

*) Այս յօդուածը թարգմանված է Լ. Տօլստօյին նուիրված ժողովածուից։ Թարգմ. Ց. Գ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Վաղը Թիֆլիսի կենտրօնական հիւանդանոցում կը կատարվի հոգեհանգիստ հանգուցեալ Ալէքսանդր II Կայսրի յիշատակին։

◆ Մեր հայրենակից բժշկապետ Ա. Բաբայեան, որ գտնվում է Պարիզում, ապրիլի 5-ին (նոր տոմարով) կարդացել է այնտեղի բալնէօլօգիական ընկերութեան մէջ մի զեկուցում «Կովկասի հանքային ջրերի, Կիսլօվօդսկի և Նարզանի հանքաղբիւրի մասին»։ Զեկուցանողի դրութիւնները վիճաբանութիւններից յետոյ ընդունվել են։ Նարզանի մասին տրված տեղեկութիւնները հետաքրքրել են ժողովականներին։ Հայերից ներկայ են եղել նիստին բժ. Էլղարեան և Գ. Մելիք-Կարագէօզեան։

◆ Բանտից ազատել են այս օրերս ձերբակալված տեխնիկ Դանէլեանին և Լ. ու Ա. Տէր-Գրիգորեան եղբայրներին։

◆ Կօրուլէտում հիմնվել է գիւղատնտեսական ընկերութիւն։

◆ Պետերբուրգ են մեկնել իշխ. Գ. Թումանօվ և Դ. Չէլօկաէվ Կախէթեան երկաթուղագծի հարցը պաշտպանելու համար։

◆ Գալիք շաբաթ տեղի կունենայ Թիֆլիսում բարձր կրթական հաստատութիւն հիմնելու խնդրով զբաղվող գլխաւոր յանձնաժողովի նիստը։

«Рус. Вѣд.» լրագրում կարդում ենք. «Պետական Դումայի անդամ պ. Մ. Ս. Աջեմեանը Արմաւիրից ստացել է հետևեալ տեղեկութիւնները.—Արմաւիրում տեղի են ունենում ձերբակալութիւններ և խուզարկութիւններ։ Ձերբակալւում են վաճառական և արդիւնաբերութեամբ պարապող հայերին, որոնք 1905 և 1906 թւերին փողեր են տուել «Դաշնակցութեան» պահանջմամբ։ Ձերբակալվածների մէջ կան շատ ծերեր և գրեթէ բոլորը աչքի ընկնող անձնաւորութիւններ են։ Ձերբակալութիւնները և խուզարկութիւնները կատարվում են յայտնի սպայ Պօնօմարեվի հսկողութեան տակ, որի գործունէութիւնը շատ անգամ լուսաբանվել է Պետական Դումայում Վիլնայի պահնորդային բաժանմունքի բռնած պրովօկատօրական ընթացքի առիթով։ Պ. Աջեմեանը դիմել է ներքին գործերի մինիստրի օգնական Կուրլօվին» (որը նորերս նշանակվել է ժանդարմների կորպուսի կառավարիչ)։

◆ Այսօր, ապրիլի 3-ին, երեկոյեան ժամը 7-ին, Գայիանեան օրիորդաց դպրոցի դահլիճում տեղի կունենայ Ուսուցչական Միութեան անդամների ընդհանուր ժողով, որտեղ Շուշու թեմական դպրոցի երաժշտութեան ուսուցիչ պ. Ա. Մելիքեանը մի դասախօսութիւն կը կարդայ «Երաժշտութեան զարգացման խնդիրը մեզանում» վերնագրով։ Պ. Մելիքեանը միջնակարգ ուսումը առել է Գէորգեան ճեմարանում, իսկ բարձրագոյն կրթութիւնը ստացել է Բերլինի համալսարանում և երաժշտական կօնսերվատօրիայում։ Կողմնակի անձինք ևս կարող են ներկայ լինել ժողովին։

◆ Հայոց Ազգագրական Ընկերութեան խորհուրդը, որոշելով ամսիս 26-ին յօգուտ ընկերութեան կազմվելիք զբօսանքին դնել նաև կովկասեան ժողովրդական երգեր, խնդրում է երգեցիկ խմբին մասնակցել ցանկացողներին՝ դիմել ընկերութեան գրասենեակը, Մեժեվայա փող. № 4.

◆ Այսօր կովկասագիտական բարձր դասընթացքներում տեղի կունենայ պրոֆ. Խախանօվի վերջին դասախօսութիւնը վրաց գրականութեան մասին։ Այսօր երեկոյեան ևեթ դասախօսը կը մեկնէ Բագու։

◆ Թիֆլիսի էլէքտրաքարշի ծառայողների և կենտրօնական վարչութեան ներկայացուցիչ ինժեներ Լէբօնի միջև կայացաւ լիակատար համաձայնութիւն երկուստեք զիջումներով։ Համաձայնութեան հետևանքների մասին տեղեկացվելու է Փոխարքայից նշանակված յատուկ մասնաժողովին։

◆ Ապրիլի 1-ից Թիֆլիսի էլէքտրաքարշը երթևեկում է ամառային ժամանակով, այսինքն պարկից վագօնները դուրս են գալիս առաւօտեան ժամը 6-ին, վերջին վագօնը Երևանեան հրապարակից մեկնում է գիշերվայ ժամը 12-ին։

◆ Այս տարվայ մայիսի երկրորդ կէսից մինչև յունիսի 30-ը, կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուն մտադիր է կազմակերպել կարճ-ժամանակեայ (չորս շաբաթով) դասընթացքներ Թիֆլիսում, Քութայիսում և Ստաւրօպօլում ստորին և միջին կրթական հաստատութիւնների, հոգևոր դպրոցների և ուսուցչական ինստիտուտի ուսանողներին ֆիզիկական դաստիարակութեան մեթօդների հետ ծանօթացնելու համար։ Դասընթացքների նպատակն է՝ պատրաստել երկսեռ ղեկավարներ մարմնամարզական վարժութիւններով և հասարակական խաղերով։ Այդ պատճառով հոգաբարձուն առաջարկել է դասընթացքներին այնպիսի անձեր ուղարկել, որոնք ծանօթանալով և վարժվելով յիշեալ խաղերի և մեթօդների հետ՝ կարողանան նոյնը սովորեցնել իրանց դպրոցներում։ Բացի դրանից, դասընթացքների համար հրաւիրվելու են նաև գիմնազիաներում և այլ կրթական հաստատութիւններում մարմնամարզութիւն աւանդող ուսուցիչները։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Մարտի լոյս 30-ի գիշերը Թիֆլիսեցի Դաւիթ Մարգարեանը, որ ապրում է Զօրաբաշսկայա փողոց № 26 տանը, հարբած ժամանակ ուզեցել է սպանել իր կնոջը՝ Մարիամին։ Վերջինս սկսում է աղաղակել. վրա են հասնում դռնապանները և բռնում են Մարգարեանին, խլելով նրա ձեռքից խոհանոցի մեծ դանակը։

◆ Կիրակի գիշերը, մարտի 29-ին, Թամամշեանի քարվանսարայում գտնվող Զ. Դաւիդովի ձկնեղէնի խանութից գողացել են 120 ր. փող, երկու պուդ խաւեար, «բրաունինգ» ատրճանակ և երկու ոսկէ ու մի արծաթէ մէդալներ։ Գողը մտել է հարևան գլխարկի արհեստանոցի պատը ծակելով։ Կասկածն ընկնում է արհեստանոցի տէր Ազարապետ Ասիտովի և դռնապանի վրա, որոնք ձերբակալված են հաշտարար դատաւորի կարգադրութեամբ։

◆ Ապրիլի 1-ին, երեկոյեան ժամը 8-ին, Նիկօլաեւսկայա փողոցում, Երաստ Բուխբաշվիլու փուռը մտաւ նրա քնած ժամանակ համագիւղացի Երուանդ Գզլիձէն և և ինչ-որ սուր զէնքով նրան վէրք հասցրեց փորից, որից յետոյ փախաւ։ Ի՞նչ նպատակով էր այդ վիրաւորելը, դեռ պարզված չէ։

◆ Ապրիլի լոյս 1-ի գիշերը 1-ին քաղաքամասում շուրջկալի ժամանակ զինուորական պահակախումբը ձերբակալել է 56 մարդու առանց անցագրի և գործի։

◆ Արտէմ Մամուլովին (սղնախեցի) գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ արգելվում է բնակվել նահանգապետութեան սահմաններում։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳ. ԳՈՐԾ.

1 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ցարսկօէ Սէլօյում բաղդ ունեցաւ ներկայանալ Թագաւոր Կայսրին նապօլեօնական պրինց Կումին իր շքախմբով։ Կայսրը նրան շնորհեց Ս. Անդրէյ Նախակոչի շքանշանը։

Լօպուխինի գործի առթիվ նախնական քննութիւնը վերջացաւ։ Վաղը մեղադրեալին կը յանձնվի մեղադրական ակտը։

ԳԱՆՁԱԿ։ Նուխու գաւառում սպանվել է Գեատկաշէնի պօստ-հեռագրական բաժանմունքի կառավարիչը։ Կասկածով ձերբակալված են գիւղական տանուտէրը և ցրիչը։

ՄՕՍԿՎԱ։ Քաղաքային դումայի դահլիճում հանդիսաւորութեամբ բացվեց ֆաբրիկային բժիշկների համառուսական համագումարը։

ԼԻԲԼԻՆ։ Մարտի 27-ի գիշերվայ ժամը 3-ին աքսորականները, թւով 13 մարդ, ստուգելու ժամանակ յարձակվեցին բանտային կառավարիչների վրա և խլեցին նրանց զէնքերը։ Կրակելու ժամանակ սպանվեց կառավարիչներից մինը, վիրաւորվեց թեթև կերպով մի բանտարկեալ։ Անմիջապէս բանտ եկաւ նահանգապետը, կանչվեցին զօրքեր։ Կարգը վերահաստատվեց։

ՄՕՍԿՎԱ։ Ցմահ տաժանակիր աշխատանքի դատապարտված բանտարկեալներից մինը յարձակվեց դանակը ձեռքին բանտապետի օգնականին, կտրեց նրա շորը, յետոյ տեղնուտեղը թունաւորեց իրան։ Բանտային կառավարիչների կրակած գնդակներից վիրաւորվեցին երեք բանտարկեալներ։

ՎԱՐՇԱՎԱ։ Վախճանվեց «Роль»-ի խմբագիր հրատարակիչ յայտնի հակասեմիտ, կաթօլիկական դաշնակցութեան կազմակերպող Եան Ելէնսկին։

ՎԵՆԵՏԻԿ։ Եկաւ գերմանական թագաւորական զոյգը։

ՌՈՒՍՏ։ (Նահանգ Նիւ-Եօրկում)։ Քաղաքի արևելեան մասում հրդեհ ծագեց, որին ճարակ դարձան մի շարք տներ և մի քանի եկեղեցիներ։ Երեկոյեան դէմ հրդեհը դադարեց։ Հարիւրաւոր մարդիկ մնացին առանց ապրուստի։ Մարդկային զոհեր չը կան։

ԲԵՐԼԻՆ։ «Բերլինէր-Տագէբլատի» պատասխանատու խմբագրին դատարանը ենթարկեց 1500 մարկ տուգանքի զինուորական և ճանապարհների հաղորդակցութեան մինիստրներին վիրաւորելուն համար։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

!!ԵՐԲԵՔ ՉԵՂԱԾ!!
Միայն 2 ռուբլի 55 կոպէկով



ուղարկում ենք հետևեալ արժէքաւոր 4 իրերը։ 1) Տղամարդ. գրպ. էլեգանտ և ամուր ժամացոյց՝ «Անկէր» (և ոչ ցիլինդր), անգլ. սև պողպատից, լարելը առանց բանալիի՝ 36 ժ. մի անգամ, ընթացքը 10 քարերի վրա։ 2) Նոր ձևի էլեգանտ շղթայ։ 3) Բրէլօկ-կինեմատօգրաֆ՝ պիկանտ տեսարաններով, կամ թէ կողմնացոյցով։ 4) Այծեամշկի քսակ՝ ժամաց. փչանալուց պահպան. համար։ Ամբողջ գարնիտուրի գինն է միայն 2 ր. 55 կ., 2 գարն.—4 ր. 85 կ։ «Placke» կոչվող ժամաց., շվէյցար. իսկական ոսկուց, բաց, բոլոր յաւելուածներով.—4 ր. 25 կ., 2 գարն. 8 ր.։ Սև ժամաց. բաց, շատ տափակ։ «Moser» յայտնի ֆաբ., 10 քար. վրա, բոլոր յաւելուածներով—3 ր. 50 կ., 2 գարն.—6 ր. 50 կ.։ Տղամ. ժամա. 8-օրեայ լարումով, սև պողպատից—5 ր., 2 հատը—9 ր. 50 կ.։ Ճանապարհածախքը 1—4 հատի համար՝ 40 կ. (Սիբիր՝ 75 կ.)։ Ամեն մի ժամաց. կցվում է երաշխաւորութիւն 6 տարով։ Ուղարկ. պօստով, վերադիր վճ. և առանց կանխավճ.։ Հասցէագրել՝ Т-ву „ВПЕРЕДЪ" Варшава, Панская 39/33.

(6,14,24.ապ 3,14) (В.15727) 190. 5—4

Մօտիկ ապագայում կը տպագրվին
ՍԱՀԱԿ ԱԻԱԳ ՔԱՀ. ՍԱՀԱԿԵԱՆԻ
ԿՐՕՆԻ հետևեալ պատկերազարդ դասագրքերը

1. Առաջին տարի (ճոխացրած)
2. Երկրորդ տարի,
3. Երրորդ տարի,
4. Գործք առաքելոց։
5. Հին-ուխտի նիւթի մշակութիւնը։

Պատկերները վերցված են՝ 1) եւրոպական յայտնի նկարիչների ընտիր գործերից և 2) ազգային կեանքից։
«Գուտտենբերգ» գրավաճառանոց։
(Ե. Հ) 148. 10—9

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ
ՍԱՆԱՏՕՐԻԱ ՊԵԱՏԻԳՕՐՍԿՈՒՄ
Դ-ր Մ. Ս. ԳՈՒՐԵՎԻՉԻ

Ջղային, ներքին և կանանց հիւանդութիւններ։ Գեղեցիկ վայր։ Յարմար կարգաւորութիւն։ Ժուժկալական ճաշ։ Բժշկութեան ֆիզիք. մէթօդներ (էլեքտր., մասսաժ, մարմնամարզ., բժշկութիւն Ֆրէնկելի սիստեմով՝ քայքայված ջղերի—աղային, ցեխային, ածխաթթւային վաննաներ. Նարզանի և արեգակնային վաննաներ)։ Սէզօնը՝ մայիսի 1-ից մինչև սեպտ. 15-ը։ Վճարը՝ թէ բժշկվելու և թէ ապրուստի համար՝ ամսական 150 ր.։ Վաղօրօք գրվել ընդունվում է։ Տեղեկութ. և ծրագրի մասին դիմել մինչև ապրիլի 15-ը՝ Москва, Кузнецкій мостъ, 15, д-ру М. С. Гуревичу. Ապրիլի 15-ից յետոյ՝ Пятигорскъ, Санаторій Гуревича. (М. 125978) 273. 1—1

Զատկական լաւագոյն նուէր
ՀԱՍԿԵՐ
Մանկական պատկերազարդ ամսագիր
(Չորրորդ տարի)

Ամսագիրը լոյս է տեսնում Թիֆլիսում 32—48 երեսանոց մեծադիր գրքոյկներով նախկին ընդարձակ ծրագրով,
Մշտական աշխատակցութեամբ ՅՈՎ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ և ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ

1909 թ. «ՀԱՍԿԵՐԻ» յաւելուածները լինելու են
2 Մեծադիր պատկեր. 2 Բազմանկ. հէքիաթ. 2 Պատկերազարդ պատմուածք
6 պրակ (32 երեսանոց) «Մանկավարժական գրադարան»

Ընտանեկան կրթութեամբ կարևորագոյն հարցերին նուիրված։ Այս յաւելուածներից արդէն տրված են. 1) Վարդան Մամիկոնեանը Աւարայրի դաշտում—մեծադիր ֆօտոտիպիա, հիմնված նոր հնագիտական հետազօտութիւնների վրա. 2) Գիւղացին և արջը—հէքիաթ Աթ. Խնկոյեանի, գունաւոր։ Զատկին կուղարկվի 3) Քաջ ձմեռօրդներ—ճոխ բազմանկ. հէքիաթ։

Բաժանորդագինն է ճանապարհածախսով

Տարեկան	4 ր.,	առանց յաւելուածների	3 ր.
Պարսկաստանում	4 ր. 50 կ.		3 ր. 50 կ.։

Խմբագրատան հասցէն՝ Թիֆլիս, Բէհբութեան փող., № 25. Тифлисъ, Редакція журнала «АСКЕРЪ» կամ Tiflis (Caucase), Rédaction du journ. «Hasker»
Խմբագիր-հրատարակիչ՝ Կատ. Լիսիցեան

Թիֆլիսում կարելի է գրվել նաև «Գուտտենբերգ» գրախանութում և «Փարոս» կիօսկում, Բագւում՝ «Сотрудникъ» գրախանութում, իսկ Երևանում՝ Սարգիս Օհանջանեանի գրախանութում։
(Կ. Հ. ու.) 255. 3—3

Զախարիյ Ժդանովի Բանկային Տանը—թէ մաս-մաս վճարումով եւ թէ ամբողջապէս (կանխիկ)—գնված խաղատոմսերից 37 հատը տարել են զանազան գումարներ, որոնց թւում 1 հատը՝ 200,000 ռուբ., 1 հատը 40,000 ռուբլի եւ 2 հատը 10,000 ական ռուբլի։

1909 թ.
Մայիսի 1-ին

Պետերբուրգի Պետական Բանկում տեղի կունենայ վիճակահանութիւն III ԽԱՂԱՐԿՈՒԹԵԱՆ (ԱԶՆՈՒԱԿԱՆԱԿԱՆ ՏՈՄՍԵՐԻ։
ՏԱՐԱԾ ԳԼԽԱՒՈՐ ԳՈՒՄԱՐԸ 200,000 ր.

Յետոյ գալիս են. 75,000 ր., 40,000 ր., 25,000 ր., 3-ը 10,000-ական, 5-ը 8,000-ական, 20-ը 1000-ական և 260-ը 500-ական ր., ընդամենը 300 խաղատոմս, որի ընդհանուր գումարն է 600,000 ր.

ԵՐՐՈՐԴ (ԱԶՆՈՒԱԿԱՆԱԿԱՆ) ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆԸ ԱՄԵՆԱՄԱՏՉԵԼԻՆ ՈՒ ԱՄԵՆԱԷԺԱՆՆ Է ԲՈԼՈՐ ԵՐԵՔ ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Նա էժան է I փոխառութիւնից 100—120 ր. և II փոխառ. 40—45 ր., մինչդեռ նրա ամեն մի տոմսակը ՄԻԵՒՆՈՅՆ ՏԵՍԱԿ ՇԱՆՍ ՈՒՆԻ ԳՈՒՄԱՐՆԵՐ ՏԱՆԵԼՈՒ ՄԷՋ, ինչպէս և առաջին երկու փոխառութիւնների տոմսակները, որովհետև III փոխառութեան տոմսակների թիւը նոյնքան է, որքան II փոխառութեանը. միայն 5% աւելի է I փոխառութեան տոմսակներից. իսկ բոլոր 3 փոխառութիւնների թէ տանող տոմսակների և թէ տարած գումարների քանակը նոյնն է, այն է 300 խաղատոմս 600,000 րուբլի գումարով։

ԳՈՒՄԱՐՆԵՐ ՏԱՆԵԼՈՒ ՇԱՆՍԵՐՆ ԱՒԵԼԱՆՈՒՄ ԵՆ

տարե-տարի, որովհետև խաղարկութեան մէջ մասնակցում են շարունակ պակաս քանակ ունեցող տոմսակներ՝ շնորհիւ ամեն տարի տեղի ունեցող հանգցման (1909 թ. կը հանգցվի 24,700 տոմսակ)։ Վերջին տարիները, երբ փոխառութիւնները վերջնականապէս պիտի հանգցվեն (յունվ. 2-ին 1925 թ. I փոխառ. համար, մարտի 1-ին և մայիսի 1-ին 1926 թ. II և III փոխառ. համար)

ԳՈՒՄԱՐՆԵՐ ՏԱՆԵԼԸ ԲՈԼՈՐՈՎԻՆ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԵՐԵՒՈՅԹ ԿԸ ԴԱՌՆԱՅ։

Բայց միաժամանակ գումարներ տանելու շանսի հետ աւելանում են և տոմսակների գները։ Այս րոպէիս I փոխառ. տոմսակների գինը համարեա թէ քառապատկվել է, իսկ II և III փոխառ. համարեա թէ եռապատկվել։ Այժմ այդ գները աւելանում են ոչ թէ օրերով, այլ ժամերով։ Վերջին տասը տարիները գները ահռելի չափերի կը հասնեն, և այդ ժամանակ սովորական՝ ոչ-հարուստ ամեն մի անձն ստիպված պիտի լինի հրաժարվել խաղատոմս ձեռք բերելու հնարաւորութիւնից.
հետևաբար, հէնց այժմ պէտք է ձեռք բերել խաղատոմս։

ՈՎ ԱՅԺՄ ԳՆԵԼՈՒ ԵՂԱՒ ՏՈՄՍԱԿԸ,

նա կարող է տոմսակի գնման համար գործադրած դրամագլուխը մեծացնել, իսկ բաղդաւոր դէպքում—ամբողջ կարողութիւն ձեռք բերել՝ տանելով խաղացվող գումարներից։ Խաղարկութեան տոմսակը—դա բաղդի թալիսմանն է, դա մի մոգական առարկայ է, որը մի գեղեցիկ օր յանկարծակի կարող է երջանկացնել տոմսակի տիրոջը, դարձնել նրան հարուստ, անկախ, աշխատանքից և հոգսերից ազատ։ Նա միանգամից

ԿԱՊԱՀՈՎԷ ԸՆՏԱՆԻՔԸ ԵՒ ԿԸ ՏԱՅ ՆՐԱՆ ԲԱՂԴԱՒՈՐ ԿԵԱՆՔ,

III փոխառ. (Ազնուականական) տոմսերի արժէքը յունվարին 1909 թ. եղել է 230 ռուբ., աստիճանաբար բարձրանալով մարտի առաջին թւերում արդէն հասել է 273 րուբլու։ Բոլոր խաղատոմսերը, առհասարակ, խաղարկութեան մօտենալուն բարձրանում են գներով։ Բարձրացումը սկսվում է մի ամիս առաջ և մինչև խաղարկ. նախընթաց օրը խոշոր չափի է հասնում։ Պարզ օրինակ կարող է ծառայել հէնց II փոխառ. տոմսը, որը, մարտի 1-ի խաղարկութիւնից առաջ, 15 օրվայ ընթացքում բարձրացաւ արժէքով մինչև 55 րուբլի։

ՀԵՏԵՒԱԲԱՐ ՏՈՄՍԱԿՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼԸ ՉԸ ՊԷՏՔ Է ՅԵՏԱՁԳԵԼ

մինչև խաղարկութեան վերջին օրերը և վճարել մի քանի տասնեակ րուբլիներ աւելորդ գումարներ։

ՏՈՄՍԱԿ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՐԿԱՒՈՐ ՉԵՆ ՀԱՐԻՒՐ ՌՈՒԲԼԻՆԵՐ,

ՄՏՑՐԷՔ ԿԱՄ ՓՈԽԱԴՐԵՑԷՔ պօստով կամ հեռագրով ԿԱՆԽԱՎՃԱՐ 30 րուբլուց սկսած, և դուք այդ մօմենտից դառնում էք միակ և կատարեալ սեփականատէր III փոխ. տոմսակի և նրա տարած բոլոր գումարի՝ թէ մօտակայ մայիսի 1-ի 1909 թ. խաղարկ. ժամանակ և թէ յետագայում։ Մնացորդ պարտք գումարը կարող էք հանգցնել իւրաքանչիւր ամիս առնուազն 7 րուբլի ուղարկելով մինչև բոլոր պարտքի վճարումը, և կամ թէ կարելի է միանգամից ամբողջ մնացորդ պարտքը վճարել։

Կանխավճարը ստանալուն պէս իսկոյն ուղարկվում է գնողի անունով գրաւական-վկայական, որի մէջ նշանակվում է ծախված տոմսակի սէրիան և համարը։ Տոմսակի արժէքը, կանխավճարը դուրս գալուց յետոյ, գրվում է գնողի վրա իբրև պարտք, որը հանգցվում է իւրաքանչիւր ամիս 7 րուբլի վճարումով։ Կանխավճարը մուծնելով և ըստ ցանկութեան (ոչ պակաս 7 րուբլուց) իւրաքանչիւր ամիս փող ուղարկելով, գնողը այլևս ուրիշ պարտաւորութիւններ չունի։ Տոմսակը որոշված ժամանակներում ապահովագրվում է Բանկային Տան կողմից ի հաշիւ գնողի.

ԽՈՐՀՈՒՐԴ! Ի նկատի ունենալով, որ մնացորդ պարտք գումարից տոկոս է վերցվում, պ. պ. գնողների շահերի տեսակէտից՝ խորհուրդ է տրվում կանխավճարը, եթէ կարելի է, ուղարկել աւելի, նոյնպէս և մնացորդ պարտքը հանգցնել աւելի մեծ գումարներով։ Վարվելով այդպէս, դուք քիչ տոկոս կարող էք վճարել և շուտով էլ ձեռք կը բերէք իսկական խաղատոմս։ Բանկային Տան համար, ի հարկէ, դրա հակառակն է շահաւէտ, սակայն ԲԱՆԿԱՅԻՆ ՏԱՆ ԴԵՎԻԶՆ է

«ԱՄԵՆԻՑ ԱՌԱՋ ԿԼԻԷՆՏԻ ՇԱՀԵՐԸ»,

և նրան առաջնորդող պրինցիպն է՝ «Ոչ թէ կլիէնտներն են Բանկային Տան համար, այլ Բանկային Տունը կլիէնտների համար»։ Առաջնորդվելով այդ պրինցիպներով, Բանկային Տունը տալիս է իր կլիէնտներին՝ տոմսակներ գնելու համար՝ միանգամայն արտօնեալ պայմաններ—պարտքը մաս-մաս հատուցանել, և բացի այդ՝ տալիս է

ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՐԿՈՒ ՆՈՐ ԱՌԱՒԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ, ԱՅՆ Է.

1) ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿԸ իւրաքանչիւր տարած գումարից վերցնում է յօգուտ գանձարանի 5%, իբրև հարկ, այսինքն՝ 200,000 ր. տանելուց ստանում է 10,000 ր., 75,000ր.—3,750 ռուբ., 40,000 ր.—2,000 ռուբ., 25,000 ռուբ.—1,250 ռուբ. և այլն. իսկ ԶԱԽԱՐԻՅ ԺԴԱՆՕՎԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՏՈՒՆԸ այդ հարկի վճարումը վերցնում է իր վրա, եթէ գումարը տարել է այն տոմսակը, որը գնված է իրանից՝ կամ կանխիկ և կամ մաս-մաս վճարումով։ Կլիէնտը տարած գումարը ստանում է լրիւ, առանց հարկ վճարելու, և դրանով բաւական տնտեսում է։

2) ԵՐԿՐՈՐԴ ԱՌԱՒԵԼՈՒԹԻՒՆԸ կայանում է նրանում, որ կլիէնտը, բացի իր ունեցած սեփական տոմսակից, ձրիաբար մասնակից է լինում և հետևեալ 100 հատ խաղատոմսերի տարած գումարներին, որոնք (տոմսերը) պատկանում են Բանկային Տան և յատկապէս այդ նպատակով պահվում են կասսայում.

III փոխառութեան (100 տոմս)—00299—40, 00581—43, 00676—34, 00892—34, 00939-34, 01552—09, 02584—22, 02898—03, 03058—29, 04081—14, 04105-11, 04665-11, 04704—37, 04783—32, 04811—46, 05124—04, 05357—45, 05592—17, 05610—48 05611—02, 05730—08, 05797—14, 06120—43, 06432—45, 06465—22, 06772—04, 06774—04, 06816—40, 06836—32, 06965—39, 07010—12, 07234,—19, 07345—50, 07435—10, 07543—20, 07544—20, 07545—20, 07705—32, 07795—03, 07817—01, 08082—50, 08107—03, 08131—41, 08185—27, 08878—43, 08894—08, 09090—23, 09091—23, 09096—23, 09346—45, 09416—45, 09666—20, 09897—41, 09907—07, 10180—30, 10186—11, 10415—06, 10463—12, 10706—37, 10728—34, 10787—12, 10800—32, 10823—33, 10848—31, 10849—31, 10850—31, 10944—50, 11121—28, 11286—03, 11334—20, 11334—31, 11708—14, 11902—42, 12065—32, 12076—02, 12307—11, 12325—35, 12352—47, 12385—49, 12410—12, 12470—29, 12641—47, 12813—19, 12841—50, 12947—33, 13034—35, 13063—43, 13464—42, 13484—42, 13641—22, 13648—45, 13696—30, 13789—06, 13904—12, 14260—41, 14303—22, 15778—11, 15790—41, 15811—49, 15947—19.

Այդ տոմսերը անձեռնմխելի պահվում են կասսայում և չեն ծախվում։

Եթէ այդ տոմսերից մէկը կամ մի քանիսը մայիսի 1-ին 1909 թ. գումարներ տանելու եղան, ամբողջ տարած գումարը, առանց մնացորդի, բաժանվում է մինչև 1909 թ. մայիսի 1-ը մաս-մաս վճարումով ծախված տոմսերի քանակի համեմատ. այն կլիէնտը, որը գնել է մի տոմս, ստանում է մի մաս, երկու տոմս գնողը—երկու մաս եայլն։
Այդ երկու առաւելութիւնների համար Բանկային Տունը իր կողմից ուղարկված ամեն մի գրաւական-վկայականին կցում է նաև առանձին պարտագիր։

ՓՈՐՁՆԱԿԱՆ ՅՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ ՕՏԱՐԱԲՆԱԿ ԿԼԻԷՆՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ.

1) Կանխավճարն ուղարկելուց առանձին նամակ մի գրէք, այլ օգտվեցէք փոխադրական բլանկով, որի վրա և գրէք ձեր պահանջը։ Առանձին նամակը կարող է ուշանալ և կամ մեր ունեցած բազմաթիւ պահանջների շարքում, խաղարկութեան ժամանակը մօտալուտ լինելու պատճառով, կարող է ուշադրութիւնից վրիպել։

2) Հեռագրով փոխադրած գումարների հետ միաժամանակ ուղարկէք մօտաւորապէս և հետևեալ բովանդակութիւնն ունեցող հեռագիր. «Կանխավճար 30 երրորդ (պօստի հասցէն) հեռագրէք (անուն, ազգանուն և հեռագր. հասցէն)»։ Այդօրինակ հեռագիր ստանալով՝ Բանկային Տունը անմիջապէս հեռագրով կը հաղորդէ ձեզ տոմսի սէրիան և համարը և պօստով կուղարկէ ձեզ գրաւական-վկայականը։ Այս ցուցմունքները չը կատարելու դէպքում կարող են թիւրիմացութիւններ տեղի ունենալ։

3) Եթէ հեռու էք ապրում, կանխավճարի հետ միաժամանակ ուղարկէք և առաջին ամսավճարը, այսինքն՝ փոխանակ 30 ր., ուղարկէք 37 ռուբ., քանի որ առաջին ամսավճարը պէտք է հատուցանել առանց յապաղման, կանխավճարն ուղարկելու օրվանից ուղիղ մի ամիս անցած. միայն յետագայ վճարումների համար տրվում է 15-օրեայ ժամանակամիջոց։

4) Պարզորոշ գրէք ձեր անունը, հօրանունը և ազգանունը, նոյնպէս և մանրամասն հասցէն թէ ապահովագրած և թէ հասարակ նամակների համար։

5) Պօստային ծախքերի վերաբերմամբ խնայողութիւն անելու նպատակով, նոյնպէս և նրա համար, որ պարտք մնացած գումարի համար տոկոս է վերցվում, կարող էք ամսավճարները ուղարկել մի քանի ամսվանը միանգամից։

Թղթակցութիւնները և փողային փոխադրութիւնները հասցէագրել.

Банкирскому Дому ЗАХАРІЙ ЖДАНОВЪ
С.-Петербургъ, Невскій проспектъ, № 45.
(3, 14) (П. 53971) 264. 2—1

Մանկաբարձուհի եւ մասսաժիստ
Հ. ՍԱՆԹՈՒՐԵԱՆ-ԴԱՒԹԵԱՆՑԸ

Ընդունում է ծնունդներ և բժշկում է բժշկի խորհրդով կանացի հիւանդութիւններ, սրսկում է կանանց, տղամարդկանց և երեխաների կաշուի տակ թէ իր և թէ հիւանդների մօտ մատչելի գնով։ Գաւառացիներին տալիս դիւրութիւն և խորհուրդներ կանանց հիւանդութիւնների վերաբերմամբ։ Ընդունելութիւնը ամեն օր ժամը 12—1-ը, իսկ կիրակի օրերը պատուաստում է ծաղիկ։ Հասցէն՝ Петхаинскій подъемъ № 4, д. Симонянца.
(Հ. Կ.) 51. 50—26

ԲԺԻՇԿ
Ա. Ս. ԱՄԻՐԽԱՆԵԱՆ
Ներքին հիւանդութիւններ
Ընդունելութիւն ամեն օր { 11—12 ժ. առաւ. 5—6 ժ. երեկ.
Վելիամինովսկայա փող., № 10.
(Օ. Մ.) 100—67

Электропечатня Н. Г. Аганьянцъ Полицейская 7.